



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ամերիկան Անվատահեղի Դաշնակից՝ Ոչ միայն Քիւրտերուն Համար

Անցեալ Կիրակի երեկոյ Սպիտակ Տունը հրապարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, յայտարարելով թէ, ԱՄՆ նախագահ Ռոնալդ Թրամփի եւ թուրքիոյ իր պաշտօնակից Ռեքս Էրտողանի միջեւ տեղի ունեցած հեռաձայնային խօսակցութեան հիման վրայ, Թրամփ որոշած է Ամերիկեան զօրքերը դուրս բերել Սուրիայէն, այդպիսով կանաչ լոյս բանալով թրքական կողմին ներխուժելու Սուրիոյ Դիսիսային շրջանները, որոնք ներկայիս կը գտնուին Քրտական ուժերու հսկողութեան տակ:

Ըստ երեւոյթին Թրամփ այս որոշումը կայացուցած է առանց խորհրդակցելու ազգային ապահովութեան մասնագէտներուն եւ կամ բանակի բարձրաստիճան ղեկավարութեան հետ: Անակնկալ այս որոշումը մեծ փոթորիկ յառաջացուց քաղաքական եւ զինուորական շրջանակներու մօտ, որոնց կարծիքով մասնաորոշում մը ոչ միայն Ամերիկայի դաշնակից՝ քրտական ուժերու նկատմամբ ջարդ իրագործելու առիթ կու տայ Թուրքիոյ, այլեւ ճամբայ կը բանայ «Իսլամական պետութեան» վերադառնալու այդ շրջանները՝ վտանգելով Ամերիկայի ազգային ապահովութիւնը:

Թրամփի այս որոշումին դեմ բռն կերպով կը բողոքեն ու կատարուածը քիւրտերու նկատմամբ դաւաճանութիւն կը նկատեն Համարայեան ու Դեմոկրատ Գոնկրեսականներ՝ հաւասարապէս: Բողոքն ալ կը շեշտեն որ, այսպիսով Ամերիկան կը դառնայ անվատահեղի դաշնակից, բողոք անոնց համար, որոնք յոյս պիտի ունենան Ամերիկայի վրայ:

Երկար ժամանակէ ի վեր երտողան կը Փորձէր համոզել Թրամփին, որպէսզի Ամերիկեան փոքրաթիւ ուժերը հեռացնէ քրտական շրջաններէն, որպէսզի Թուրքիան կարողանայ «ապահովութեան գօտի» ստեղծել Սուրիոյ հետ սահմանի երկարութեան:

Թրամփ իր այս քայլով եկաւ անգամ մը եւս յիշեցնելու որ Արեւմուտքը վատահեղի դաշնակից չի կրնար ըլլալ փոքր ազգերու համար: Ինչպէս 1921-ին ըրաւ Ֆրանսան, Հայկական Կիլիկիան յանձնելով Քեմալական ուժերուն, նոյնը կ'ընէ այսօր Ամերիկան: Քիւրտերը եղան գլխաւոր կռուող ուժը «Իսլամական պետութեան» դեմ Ամերիկայի մղած պատերազմի ընթացքին, իսկ այժմ անոնք կը յանձնուին թրքական զօրքերու ողորմութեան:

Այս գարգացումները պէտք է առիթ դառնան դասեր քաղելու ու

Տեղեկատուական Արհեստագիտութիւններու 23-րդ Համաշխարհային Համաժողովի Պաշտօնական Բացումը Երեւանի Մէջ

Հեկտեմբեր 7-ին Երեւանի մէջ՝ Կարէն Տեմիրճեանի անուան մարզահամերգային համալիրին մէջ տեղի ունեցաւ Տեղեկատուական արհեստագիտութիւններու (Թեքնոլոժիներու) 23-րդ համաշխարհային համաժողովի (WCIT 2019) պաշտօնական բացման արարողութիւնը:

Այս տարի համաժողովի թեման է՝ «Ապակենտրոնացման ուժը. ակնկալիք եւ վտանգ»: Հոկտեմբեր 6-9 տեղի ունեցող համաժողովի ընթացքին պիտի քննարկուին, թէ ինչպէս տեղեկատուական եւ հարդարակցութեան արհեստագիտութիւնները թէ՛ դրական, թէ՛ բացասական առումներով կը վերափոխեն մեր կեանքը, ինչ ազդեցութիւն կ'ունենան շահոյթի եւ բարեկեցութեան, ապահովութեան եւ անվտանգութեան, ժողովրդավարութեան եւ մարդասիրութեան վրայ: Երեւանեան համաժողովին կը սպասուի աւելի քան 2500 մասնակից՝ 70 երկրէ:

Բացման ելոյթով հանդէս եկաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան, որ, ողջունելով համաժողովի մասնակիցները եւ հիւրերը «համաշխարհային նշանակութեան այս հաւաքի բացման առիթով», մասնաւորապէս ըսաւ.

«Մեզ համար մեծ պատիւ է եւ հաճոյք այսպիսի համաժողով հիւրընկալելը, որովհետեւ այն շատ լաւ առիթ է ձեզ եւ ձեր միջոցով միջազգային հանրութեան հետ խօսելու Հայաստանը բարձր արհեստագիտական արդիւնաբերական եր-



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ WCIT 2019 պաշտօնական բացման արարողութեան ընթացքին

կիր դարձնելու մեր ռազմավարութեան մասին, եւ ես յոյս ունեմ՝ մեր երկրում անցկացրած մի քանի օրերի ընթացքում դուք կը զգաք այն նոր ուժն ու մթնոլորտը, որ մեր երկիրը համակել է նախորդ տարի Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, թաւշեայ, ժողովրդական լեզուափոխութիւնից յետոյ: Ուզում եմ ընդգծել, որ այդ լեզուափոխութիւնը տեղի ունեցաւ ապակենտրոնացման միջոցով, ինչի արդիւնքում Հայաստանը համաշխարհային քարտէզի վրայ դարձաւ ժողովրդավարութեան կեդրոն:

Քաղաքական լեզուափոխութիւնից յետոյ այժմ մենք գտնուում ենք տնտեսական լեզուափոխութեան

շրջափոխում, որը նոյնպէս տեղի է ունենում ապակենտրոնացման շնորհիւ, որովհետեւ մենք տնտեսական լեզուափոխութեան հիմնական միջոց համարում ենք իւրաքանչիւր քաղաքացու անհատական ջանքը, անհատական նախաձեռնութիւնը, որը նա անում է ոչ թէ կառավարութեան հրահանգով, այլ իր անձնական որոշումներով, իր անձնական նպատակներով եւ ձգտումներով:»

«Մեր երկրի տնտեսութիւնը սպաւորիչ աճ է գրանցում, այս պահին ունենք 7 տոկոս տնտեսական աճ, մեր երկրում գրօսաշրջութիւնը սպաւորիչ աճ է գրանցում,

Նորթրիճի Համալսարանը Ստացած է 2.1 Միլիոն Տոլար Նուիրատուութիւն՝ Հայկական Ուսումնասիրութիւններու Նպակով

Քալիֆորնիոյ Նահանգային Նորթրիճի Համալսարանը (CSUN) անանուն նուիրատուէ մը ստացած է 2.1 միլիոն տոլար, յատկացուելու համար Հայկական ուսումնասիրութեան ծրագիրներուն:

«Մինչ նուիրատուն նախընտրած է մնալ անանուն, նման առատաձեռն նուէրներու ազդեցութիւնը աննկատ չի մնար», ըսաւ CSUN-ի նախագահ Տայան Ֆ. Հարրիսը: «Նուէրը պիտի անդրադառնայ շատերու կեանքին վրայ: CSUN կը կրթէ աւելի շատ հայ ուսանողներ, քան աշխարհի որեւէ այլ համալսարան, որ կը գտնուի Երեւանէն դուրս: Այս նուէրը կ'ամրապնդէ արդէն իսկ ուժեղ ծրագիրը, որ կ'ապահովէ գիտելիքներու հիմք հայկական մշակոյթի եւ հայերի ու ամերիկահայերու ազդեցութեան, ոչ միայն Քալիֆորնիոյ մէջ, այլեւ ամբողջ աշխարհի վրայ», կը շեշտէ Համալսարանի նախագահը:

CSUN-ի Հայկական Ուսումնասիրութիւններու ծրագրի ղեկա-



Հայկական Ուսումնասիրութիւններու ծրագրի ղեկավար Վահրամ Շեմմասեան

վար Վահրամ Շեմմասեան բարձր գնահատեց նուէրը, «որպէս իսկական գանձ, որ կը հարստացնէ երիտասարդի միտքը եւ կը խթան-

Պոլսոյ Պատրիարքարանը Պիտի Չբողոքարկէ Թուրքիոյ Պարտադրած Սահմանափակումը

Պոլսոյ հայոց պատրիարքարանէն ներս տեղի ունեցած է նախաձեռնարկ մարմնի անդամներու եւ հիմնադրամներու ղեկավարներու նիստ, որու ընթացքին որոշում կայացուցած է չբողոքարկել Թուրքիոյ ներքին գործոց նախարարութեան կողմէ Սեպտեմբեր 23-ին պատրիարքարան ուղարկուած նոր կանոնադրութիւնը: Նշենք, որ պատրիարքի թեկնածու առաջադրուելու համար կանոնադրի մէջ սահմանուած նոր պայմաններէն խնդրաբերօրոյցը արտասահմանաքնակ թեկնածուներու առաջադրման արգելքն է: Այս մասին յայտնած է Ermenihaber.am-ը:

Նիստէն ետք նախաձեռնարկ մարմնի կողմէ յայտարարութիւն եղած է, որուն մէջ մասնաւորապէս

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Կոմսենսուս՝ Մինուս Քոչարեան. Ո՞ւմ Յոյսին է Մնացել Երկրորդ Նախագահը

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանի ոչ պաշտօնական կայքի՝ 2rd.am-ի ձեռքի տակ է յայտնուել յայտարարութիւն, որին միացել են հասարակական, քաղաքական, մշակութի, սպորտի մի քանի տասնեակ գործիչներ: Յայտարարութեան այս տեքստն ըստ էութեան բովանդակային հարթութեան վրայ նորութիւններ չի պարունակում ու կրկնում է Քոչարեանի աջակիցների ծեծուած արտայայտութիւնները դատարանների վրայ բանեցուող ճնշումների, Քոչարեանի հանդէպ իբրեւ թէ գործադրուող քաղաքական հետապնդումների մասին:

Քոչարեանին սատարող գործիչները նրան համարում են «քաղբանտարկեալ» ու արձանագրում են. «Վստահ ենք՝ նախագահ Քոչարեանի ազատ արձակումը համարմբուելու, հասարակական համերաշխութիւնը վերականգնելու ազդակ կը դառնայ: Հայաստանն այսօր աւելի, քան երբեք, կարիք ունի արդարութեան եւ ներքին համերաշխութեան: Երկրի ապագայի համար յանձնառու քաղաքական ուժերին, անհատներին, հանրութեանը կոչ ենք անում համարմբուել ազգային իրական օրակարգերի շուրջ: Եթէ չսթափուենք, հայկական երկու պետութիւնների անվտանգութիւնը լուրջ սպառնալիքի տակ է յայտնուելու»:

Այս պարագայում, սակայն, հետաքրքիր է ոչ թէ յայտարարութեան տեքստը, որտեղ քաղաքական ծանօթ շեշտադրումներ են, այլ՝ այն ստորագրողները: Դաւիթ Շահնազարեանի անունը, բնակա-

նաբար, յայտնուել է նախկին համակարգի գործիչների կողքին՝ Խոսրով եւ Դաւիթ Յարութիւնեանների, Գառնիկ Իսախանլեանի, Ռուբէն Յակոբեանի, Աղուան Վարդանեանի ու միւսների հետ ամբողջացնելով Քոչարեանի աջակիցների ցանկը: Յայտարարութեան տակ ստորագրել են Քոչարեանին աջակցող յայտնի մտաւորականները՝ Զօրի Բալայեանի գլխաւորութեամբ, երկրորդ նախագահին յարող ԶԼՄ-ների ղեկավարներ, Արցախում հին համակարգի ռեսուրսային ներկայացուցիչները՝ Վիտալի Բալասանեանը, Ժաննա Գալստեանը:

Այնպիսի տպաւորութիւն է, որ այս փաստաթուղթը ոչ թէ կոնսոլիդացրել է Քոչարեանի կողմնակիցներին, այլ իւրօրինակ լիւստրացիայի թեւս է՝ ի մի բերելով բոլոր այն գործիչներին, ովքեր մերժուած են հասարակութեան կողմից:

Երկրորդ նախագահը մնացել է մի քանի տասնեակ գործիչների յոյսին, որոնց շարքերում են կա՛մ նախկին՝ քաղաքականապէս ու բարոյապէս մաշուած գործիչներ, կամ էլ մարդիկ, ովքեր հասարակական միջավայրում ունեն գրոյակային աջակցութիւն: Նման թիմով Քոչարեանն աւելի է մարգինալացուում ու դառնում է իր իսկ հոչակած «Կոնսենսուս» միտուս մէկի» հիմնական ու միակ թիրախը:

Ռոբերտ Քոչարեանի խոստացած աշնանային սրացումներն առաջժամ սահմանափակում են այս թղթի կտորով, որի բովանդակութիւնն ու մասնակիցները բացայայտում են երկրորդ նախագահի անյուսալի մենութիւնը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Վերջին Մահապարտը. Թովմասեանին Իւրայինները Դրեցին Հարուածի Տակ

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Սահմանադրական դատարանի շուրջ, աւելի շուտ դատարանի նախագահի շուրջ ստեղծուած իրավիճակը մտել է «եզրափակիչ փուլ», յամենայն դէպս այս ալիքի համար: Սահմանադրական դատարանը ստացել է Աժ դիմումը՝ դատարանի նախագահ Հրայր Թովմասեանի պաշտօնանկութեան վերաբերեալ, եւ պէտք է կայացնի որոշում՝ ընդունել, թէ՞ մերժել:

Հրայր Թովմասեանն օրերս տուած հարցազրոյցում, որը բաւական աղմուկ էր առաջացրել մի շարք ձեւակերպումների եւ բնորոշումների պատճառով, յայտարարել էր մինչեւ վերջ դիմադրելու հաստատականութեան մասին: Աղմուկ առաջացրած բնորոշումներից մէկն էլ այն էր, որ Թովմասեանը խօսել էր դաւաճանութեան մասին, ասելով, որ իր դիրքը հաւասարագոր է պետութեան սահմանի, եւ այն թողնելը կը լինի դաւաճանութիւն:

Հրայր Թովմասեանի այդ յայտարարութիւնն արժանացաւ ամենատարբեր մեկնաբանութիւնների ու քննադատութեան: Մինչդեռ, պակաս հաւանական չէ այն, որ Թովմասեանը պարզապէս անուժ էր սեփական վախերի անկեղծ խոստովանութիւն, ընդ որում վախ ոչ թէ իշխանութիւնից, այլ իւրայիններից: Գուցէ ճիշտ է այդ հասկացութիւնը վերցնել չակերտի մէջ:

Կասկածից վեր է, որ Հրայր Թովմասեանի դիմադրութիւնն ու պայքարը անհատական չէ: Նա մենեւեւ անգետ չէ այդպիսի քայլի գնալու համար: Նրան դրել են պայքարի առաջնագծում, այն համակարգը, որում իր որոշակի դիրքը, առաքելութիւնն ու փոխկապակցող շահերի շրջանակն է ունեցել ՄԳ նախագահը, մինչ այդ ունենալով տարբեր այլ նշանակալի կարգավիճակներ:

Նախկին իշխող համակարգը Գաղիկ Յարութիւնեանին թոյլ տուեց, որպէսզի հանգիստ հեռանայ, երբ Նիկոլ Փաշինեանը 2019-ի Մայիսի 20-ին յայտարարեց դատական համակարգի հարցը լեզափոխութեան օրակարգ բերելու մասին: Յարութիւնեանի հրաժարականի վճռորոշութեան հանգամանքին անդրադարձայ վերջին հրաժարականը. Գաղիկ Յարութիւնեանը հնչեցրեց նախկին ռեժիմի վերջին գանգը յօդուածում, շոշափելով նրա հրաժարականի առանցքայնութիւնը ծավալվող ներքաղաքական յետլեզափոխական գործընթացում:

Հրայր Թովմասեանն անշուշտ հիանալի է պատկերացնում, որ Յարութիւնեանին նախկին իշխող

կական է, այս իրողութիւնն Ատրպէյճանի բարձրագոյն իշխանութիւնը ճանաչել եւ համապատասխան Դեկրետով հոչակագրել է 1923թ.-ին: Այդ որոշումն ընդունուել է խորհրդային կեդրոնական կառավարութեան պարտադրանքով: Ներկայումս նոյնը պիտի անի միջազգային հանրութիւնը՝ պարտադրի, որպէսզի Ատրպէյճանը վերաճանաչի Լեւնային Ղարաբաղը որպէս հայկական: Միւս հարցերն ածանցեալ են, ենթակայ բանակցութիւնների սեղանի շուրջ կարգաւորման:

«ՀՐԱՊԱՐԱԿՕ»

համակարգը տուեց «արժանապատիւ հրաժարականի» արտօնութիւնը կամ իրավունքը, իսկ ահա Հրայր Թովմասեանին փաստացի թողեցին որպէս վերջին կամ միակ «մահապարտ»: ՄԳ նախագահը հասկանում է, որ իրեն գրկել են արժանապատիւ հրաժարականի հնարաւորութիւնից: Անգամ եթէ Հրայր Թովմասեանն ինչ-ինչ զարգացումների արդիւնքում յայտարարի հրաժարականի մասին, դա արդէն որեւէ դասաւորութեան պարագայում չի ունենալու արժանապատուութեան այն էֆեկտը, որ կարող էր ունենալ մինչ զարգացումների ներկայիս փուլին հասնելը:

Ահա այդ համատեքստում, դաւաճանութեան մասին նրա խօսքը իւրայիններից դաւաճանութեան անձնական վախի անկեղծ խոստովանութիւն է եւ փաստացի դիմադրութեան նշանակալի սահմանում ոչ թէ իր, այլ իւրայինների համար: Զէ՞ որ Հրայր Թովմասեանը լաւ գիտէ իր հարազատ համակարգն ու այն կազմող սուբիեկտների բնույթը, ըստ այդմ լաւ է պատկերացնում նաեւ, որ իրեն ուղղված աջակցութիւնը լոկ առերեւոյթ է միատարր եւ կուռ: Գործնականում, իւրաքանչիւր սուբիեկտ լուծում է իր հարցը՝ տուեալ դէպքում Թովմասեանի «մահապարտութեամբ», եւ նա երբեք չգիտէ, թէ ում պարագայում երբ կարող է լուծուած լինել նրան «գոհաբերելը»: Որովհետեւ լավ գիտէ, որ իր ճակատագիրը որոշողը մի քանի դատաւորների կազմը չէ, այլ նախկին իշխող համակարգի սուբիեկտները:

«ԼՐԱԳԻՐ»

Մեր Պատասխանը «Չեմբելենին»

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

Նախ Ատրպէյճանի նախագահը, ապա եւ՝ ԱԳՆ-ն յայտարարեցին, թէ «գոյութիւն չունի Լեւնային Ղարաբաղի ժողովուրդը հասկացութիւն»: Նպատակը հասկանալի է՝ «չկայ ժողովուրդ, չկայ ինքիք»: Այս դէպքում՝ ինքնորոշման իրաւունքի իրացման: Այդ յայտարարութիւնների կապակցութեամբ մեզանում հնչեցին հակադարձումներ, երբեմն՝ նոյնիսկ չափազանց կոշտ: Բայց դրանք գերազանցապէս յուզական էին: Մինչդեռ Ատրպէյճանին հարկ է վճարել իր իսկ մանրադրամով: Եթէ Լեւնային Ղարաբաղի ժողովուրդը «գոյութիւն չունի»՝ ինչպէս Ալիեւն ու իր ԱԳՆ-ն են ասում, ապա ինչու՞ 1921թ. Յուլիսի 5-ին ՌԿ(Բ)Կ կողմից իրենց որոշել է այն օժտել մարզային լայն ինքնավարութեամբ, այսինքն՝ պետական կազմաւորման կարգավիճակով: Ինչու՞ ինքնավար Լեւնային Ղարաբաղի կազմաւորման մասին Ատրպէյճանի Կենտրոնական ժողովի 1923թ. Յուլիսի 7-ի Դեկրետում սեւով սպիտակի վրայ գրուեց, որ այն ստեղծուած է «Ղարաբաղի հայկական մասից»:

Այսինքն, Ատրպէյճանի իշխանութեան բարձրագոյն մարմինն ընդունեց, որ ընդհանրական Ղարաբաղ կոչուող տեղաշրջանը բաղկացած է երկու՝ հայկական եւ մուսուլմանական մասերից, որոնցից առաջինն օժտուած է պետական կազմաւորման՝ ինքնավար մար-

զի կարգավիճակով: Նոյն Դեկրետում կայ մի շատ հակա հաստատագրում, որ ինքնավար մարզի հողը, անտառները, ջրերը հանդիսանում են, «նրանց ներկայ տէրերի սեփականութիւն»: Ատրպէյճանի իշխանութեան բարձրագոյն մարմինն, այսպիսով, 1923թ. Յուլիսի 7-ին հաստատագրել է, որ Լեւնային Ղարաբաղի տարածքը հայկական է, որի սեփականատէրը նրա բնակչութիւնն է: Իսկ սեփականատէր բնակչութիւնը ոչ թէ մարդկանց թուաբանական ամբողջութիւնն, այլ հենց ժողովուրդն է: Այս իրաւական սահմանումն Ատրպէյճանը չեղարկել է 1991թ. Նոյեմբերի 24-ին՝ Լեւնային Ղարաբաղի ինքնավարութիւնը լուծարելու մասին Գերագոյն խորհրդի որոշմամբ, որը ԽՍՀՄ սահմանադրական վերահսկողութեան ատեանի կողմից ճանաչուել է ոչ օրինական:

Այսպիսով, Խորհրդային Միութեան փլուզման ժամանակաշրջանն Ատրպէյճանն օգտագործել է Լեւնային Ղարաբաղի ժողովուրդին հայրենագրելու, նրան անկապտելի սեփականութեան իրաւունքով պատկանող տարածքն անեքսիայի ենթարկելու, ԼՂ հայ մեծամասնութիւնը բռնատեղահանելու, իսկ արցախահայութիւնը՝ սեփական իրաւունքները պաշտպանելու եւ ազգային պետականութիւն վերահաստատելու նպատակով: Սա է ԼՂ հիմնախնդրի էութիւնը: Լեւնային Ղարաբաղը հայ-



ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՎԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հիւսիսային Պողոտայ-Քասաբատ» Ծրագրով Սեղաւորները Պիտի Պատժուին. Արարատ Միրզոյեան

Ազգային ժողովին մէջ ընթացող «Հիւսիսային պողոտայ-Քասաբատ» ծրագրով բացառիկ գերակայ հանրային շահ ճանչնալու հետեւանքով սեփականութեան իրաւունքի ոտնահարման ինդիքները» թեմայով խորհրդարանական լսումներու ժամանակ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյեանը ըսած է, որ քայլեր պիտի իրականացուին իրացման գոտիներու բնակիչներու իրաւունքներու վերականգնման ուղղութեամբ, իսկ մեղաւորները պէտք է պատժուին:



ԱԺ նախագահ Արարատ Միրզոյեան

Ժեղ կախուածութիւնը գործադիր իշխանութեան այս շահագրգիռները կայացուցիչներէն: Ասոր վառ ապացոյցը, ըստ ԱԺ նախագահի, այն է, որ բազմաթիւ կայացուած վճիռներ այսօր հակառակ աւարտը կ'ունենան Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին մօտ: Եւ այն պայմաններուն մէջ, երբ քանի մը տասնեակ մարդիկ այս գործընթացի արդիւնքով տոլարային միլիոնատէրեր դարձած են, այսօր ՄԻԵԴ վճիռներու պայմաններուն ՀՀ-ն արդէն աւելի քանի 2 միլիոն եւրօ տոլարի փոխհատուցում տուած է տուժածներուն:

«Մեր ջանքերը՝ իրաւական պետութիւն կառուցելու, թերի կը լինեն, եթէ մենք չանդրադառնանք ժամանակին գերակայ հանրային շահի անուան տակ տեղի ունեցած քաղաքացիներին ունեզրկման գործընթացին եւ սեփականութեան իրաւունքի գանգաւորման խախտումներին: Խնդիրը, իմ կարծիքով, բազմաշերտ է, եւ կ'անդրադառնամ դրանցից երեքին: Նախ, բազմաթիւ դիտարկումների համաձայն՝ այդ գործընթացում դրսեւորուել են գործադիր իշխանութեան տարբեր օղակների, գանազան բարձրաստիճան պաշտօնեաների ինքնիրաւութիւնը, կամայականութիւնը, իսկ գուցէ նաեւ սեփական պիզնես եւ սեփական շահերը: Այսինքն՝ մենք խօսում ենք քրուակիցիոն յանցագործութիւնների մասին: Եւ ահա, անցումային արդարադատութեան շրջանակներում մենք պէտք է անպայման կարողանանք անդրադառնալ այս խնդիրներին, վերաքննել դրանք եւ փաստերի հաստատման դէպքում գտնել եւ պատժել մեղաւորներին»,- ըսած է Արարատ Միրզոյեանը:

Ասոր խօսքով՝ երկրորդ բաղադրիչը հետեւեալն է: Բացի գործադիր իշխանութեան տարբեր ներկայացուցիչներու այս շահերէն ու մասնակցութենէն, դրսեւորուած է նաեւ դատական իշխանութեան ու-

Ազգային ժողովը Թովմասեանի Լիազօրութիւնները Դադրեցնելու Որոշումը Ուղարկեց Սահմանադրական Դատարան

Ազգային ժողովը փակ գաղտնի բուհարկութեամբ ընդունեց Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասեանի լիազօրութիւնները դադրեցնելու հարցով ՄԴ դիմելու որոշումը: 132 պատգամաւորներէն բուհարկութեան մասնակցած են 101-ը, կողմ բուհարկած է 98, դէմ՝ 1 պատգամաւոր:



Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասեան

Բուհարկութեան մասնակցած են միայն իշխող «Իմ քայլը» խմբակցութեան եւ «Լուսաւոր Հայաստան»-ի պատգամաւորները: «Բարգաւաճ Հայաստան»-ը նախապէս յայտարարած էր, որ պիտի չմասնակցի. ինչպէս ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկեանը ըսած էր, Թովմասեանի լիազօրութիւնները դադրեցնելու հիմնաւորումները թոյլ են:

Ինչպէս «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ տեղեկացուցած է Պետախրաւակաւ հարցերու խորհրդարանական յանձնաժողովի նախագահ Վլատիմիր Վարդանեանը, որոշումը ստանալէ եւ վարոյթ ընդունելէ 30 օրուայ ընթացքին Սահմանադրական դատարանը պէտք է որոշում կայացնէ, այդ ժամկէտը կրնայ եւս երկարացուիլ մինչեւ 50 օրով:

Պատասխանելով «Ազատութեան» հարցին՝ ինչպիսի որոշում ալ կայացնէ Սահմանադրական դատարանը, իշխող խմբակցութիւնը կ'ընդունի, բուհարկութեան մասնակցած Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը ըսած է, որ այդ:

«Եւ հիմա մենք կասկած ենք չայտնում, ըստ էութեան, այս որոշումը, թող ՄԴ-ն որոշի՝ դա այդպէս է, թէ՛ չէ: Իսկ ո՞վ է ասում, որ պիտի չընդունենք», - յայտարարած է խորհրդարանի խօսնակը:

«Ազատութեան» հարցին, թէ ի՞նչ պիտի ըլլայ յաջորդ քայլը, եթէ Սահմանադրական դատարանը մերժէ ընդունիլ իրենց որոշումը եւ չդադրեցնէ Հրայր Թովմասեանի

լիազօրութիւնները, Միրզոյեանը արձագանգած է, թէ քայլերը շատ են: «Դէ ես շատ քայլեր ունեմ իմ մտքում, բայց պիտի հասկանանք՝ հիմա գործընթացը ինչ պիտի լինի: Մենք ընդհանրապէս որեւէ բան որ անում ենք, իրաւական կարգաւորումների շրջանակում է, բացառում է իրաւական կարգաւորումների շրջանակից դուրս որեւէ քայլ ցանկացած հարցի պարագայում», - վստահեցուցած է ԱԺ նախագահը:

Սահմանադրական դատարանի մասին օրէնքի համաձայն՝ դիմումը քննութեան ընդունելու պահէն Սահմանադրական դատարանի դատաւորի լիազօրութիւնները կը կասեցուին մինչեւ դատաքննութեան աւարտը: Հետեւաբար՝ Հրայր Թովմասեանը իր լիազօրութիւններու դադարեցման հարցի քննարկման պիտի չմասնակցի: Սահմանադրական դատարանի նախագահի լիազօրութիւններու դադարեցման համար անհրաժեշտ են դատարանի առնուազն 6 դատաւորներու կողմ ձայները: Դատարանը ունի 9 անդամ, ներառեալ՝ Հրայր Թովմասեանը:

2020-ին Հայաստանի Մէջ Պիտի Կատարուի Մարդահամար

Հոկտեմբեր 3-ին փոխվարչապետ Տիգրան Աւինեանի գլխաւորութեամբ տեղի ունեցած է 2020 թուականի հերթական մարդահամար կատարելու նպատակով նախապատրաստական աշխատանքներուն աջակցող համապետական յանձնաժողովի նիստը: Յանձնաժողովը կողմնակալ է համակարգելու 10 տարին մէկ անգամ մարդահամարի կատարման յանձնարարութիւնը, որ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը ստանձնած է դեռ 1999-ին ընդունուած «Մարդահամարի մասին» ՀՀ օրէնքով:

նի որ այն հիանալի վարժութիւն է՝ առաջին հերթին բացառապէս պետական գերատեսչութիւններու հետագօտական կարողութիւններուն մէջ աւելի բացերը, ինչպէս նաեւ զարգացնելու անոնք:

Նիստի ընթացքին փոխվարչապետը յայտարարած է, որ մշակուած մեթոտաբանութիւնը եւ անոր արհեստագիտական լուծումները փորձարկելու նպատակով պիտի իրականացուին փորձնական մարդահամար Շիրակի մարզի Արթիկի համայնքի եւ Կոտայքի մարզի Արամուսի, Ակունքի, Կամարիսի եւ Մայակովսկիի համայնքներուն մէջ:

Փոխվարչապետը նշած է, որ մարդահամարը շատ կարեւոր է, քանի որ հաւաքագրուած եւ վերլուծուած տուեալները հիմք պիտի դառնան ոչ միայն ժողովրդագրութեան քաղաքականութեան մշակման, այլեւ ընտրական գործընթացներու կազմակերպման, ընկերային տնտեսական քաղաքականութեան ռազմավարական ծրագրման համար: Ըստ այդմ, պէտք է գործադրուին բոլոր ջանքերը՝ ապահովելու մարդահամարի կատարման բարձր որակը եւ հաւաքագրուող տեղեկատուութեան ճշգրտութիւնը:

Տիգրան Աւինեանը Վիճակագրական կոմիտէի նախագահին յանձնարարած է անձնական հսկողութեան տակ պահել փորձնական մարդահամարի որակեալ կատարումը եւ արդիւնքներու մասին ներկայացնել տեղեկատուութիւն: Բացի այդ, «ԻԿԵՆԳ» ՓԲԸ-ին յանձնարարուած է Վիճակագրական կոմիտէի եւ այլ շահագրգիռ մարմիններու հետ համատեղ ներկայացնել այն գործողութիւնները, որոնք անհրաժեշտ են մարդահամարի կատարման նպատակով վարչական շտեմարաններու փոխգործելիութիւնն ու հաւաքագրուող տեղեկատուութեան ճշգրտութիւնն ապահովելու համար:

Հայաստանի Մէջ Գործազրկութեան Մակարդակը Նուազած Է

Հայաստանի մէջ գործազրկութեան մակարդակը 2019-ի երկրորդ եռամսեակին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի նկատմամբ նուազած է 2,6 տոկոսային կէտով՝ կազմելով 17,7 տոկոս:

Հայաստանի Մէջ Գործազրկութեան Մակարդակը Նուազած Է

Հայաստանի մէջ գործազրկութեան մակարդակը 2019-ի երկրորդ եռամսեակին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի նկատմամբ նուազած է 2,6 տոկոսային կէտով՝ կազմելով 17,7 տոկոս:

Ինչպէս կը յայտնէ «Արմէնքրես»-ը՝ Վիճակագրական կոմիտէի տուեալներու համաձայն՝ գործազուրկներու թիւը ընթացիկ տարուան երկրորդ եռամսեակին կազմած է 207,2 հազար մարդ՝ նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի 236,4 հազարի դիմաց:

Ինչպէս կը յայտնէ «Արմէնքրես»-ը՝ Վիճակագրական կոմիտէի տուեալներու համաձայն՝ գործազուրկներու թիւը ընթացիկ տարուան երկրորդ եռամսեակին կազմած է 207,2 հազար մարդ՝ նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի 236,4 հազարի դիմաց:

Յատկանշական է, որ գործազրկութեան մակարդակը երկրորդ եռամսեակին հակասօրէն՝ շուրջ 4,2 տոկոսով նուազած է առաջին եռամսեակին արձանագրուած գործազրկութեան համեմատ:

Յատկանշական է, որ գործազրկութեան մակարդակը երկրորդ եռամսեակին հակասօրէն՝ շուրջ 4,2 տոկոսով նուազած է առաջին եռամսեակին արձանագրուած գործազրկութեան համեմատ:

2019-ի երկրորդ եռամսեակին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ 1,6 տոկոսով բարձրացած է զբաղուածութեան մակարդակը՝ կազմելով 47,9%:

2019-ի երկրորդ եռամսեակին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ 1,6 տոկոսով բարձրացած է զբաղուածութեան մակարդակը՝ կազմելով 47,9%:

Այս Տարի Հայաստանի Մէջ Տնտեսական Աճը Կրնայ Գերազանցել 7 Տոկոսը

Կ'ակնկալուի, որ 2019 թուականին Հայաստանի մէջ տնտեսական աճը կրնայ գերազանցել 7%-ը: Այս մասին լրագրողներու հետ զրոյցի ժամանակ ըսած է ՀՀ տնտեսութեան նախարար Տիգրան Խաչատրեանը:

Այս Տարի Հայաստանի Մէջ Տնտեսական Աճը Կրնայ Գերազանցել 7 Տոկոսը

Կ'ակնկալուի, որ 2019 թուականին Հայաստանի մէջ տնտեսական աճը կրնայ գերազանցել 7%-ը: Այս մասին լրագրողներու հետ զրոյցի ժամանակ ըսած է ՀՀ տնտեսութեան նախարար Տիգրան Խաչատրեանը:

Ասոր խօսքով՝ ՀՀ կառավարութիւնը յայտարարած է բարձր տնտեսական աճի ձգտելու եւ անոր համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու քաղաքականութիւն: «Միջին ժամկէտում մենք կարծում ենք, որ Հայաստանը պէտք է ձգտի ունենալ երկնիչ տնտեսական աճ: Կարճաժամկէտ հեռանկարում անհրաժեշտ է ապահովել 7-8% ցուցանիշ», - նշած է նախարարը:

Ասոր խօսքով՝ ՀՀ կառավարութիւնը յայտարարած է բարձր տնտեսական աճի ձգտելու եւ անոր համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու քաղաքականութիւն: «Միջին ժամկէտում մենք կարծում ենք, որ Հայաստանը պէտք է ձգտի ունենալ երկնիչ տնտեսական աճ: Կարճաժամկէտ հեռանկարում անհրաժեշտ է ապահովել 7-8% ցուցանիշ», - նշած է նախարարը:

Միաժամանակ Տիգրան Խաչատրեանը ըսած է, որ որպէս նախապայման՝ կայուն տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել բաւարար ներդրումային մակարդակ:

Միաժամանակ Տիգրան Խաչատրեանը ըսած է, որ որպէս նախապայման՝ կայուն տնտեսական աճ ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել բաւարար ներդրումային մակարդակ:

Նախարարը նշած է, որ այսօր մեծ ներդրումներ կ'ըլլան վերականգնող ուժանիւթի, շինարարութեան, վերամշակող արդիւնաբերութեան, գինեգործութեան, ոսկեգործութեան ոլորտներուն մէջ:

Քիմ Եւ Քորթնի Քարտաշեանները Էջմիածնի Մէջ Սկրտեցին Իրենց Երեխաները



Հայագրի հեռուտաստղ Քիմ Քարտաշեանը, որ ժամանած է Երեւան, երէկ առաւօտեան մեկնած է էջմիածին: Քիմը եւ անոր քույրը՝ Քորթնին, մկրտած են երեխաները: Վերջիններս եկեղեցւոյ մէջ հետաքրքրութեամբ հետեւած են ամէնուն, ինչ կատարուած է: Բոլորը գեղեցիկ սպիտակ հագուստներ կրած են: Ինչպէս յայտնի է, Քիմի աւագ դուստրը՝ Նորթին, մկրտած են Երուսաղէմի մէջ՝ 2015-ին: Քիմ Քարտաշեանը ամուսինին ու որդի-

ին հետ այնտեղ մեկնած էր Հայաստան այցէն անմիջապէս ետք. անոնք կը մասնակցէին Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումներուն: Աշխարհի ամենալսելի ձայներէն մէկը Հայաստան է աւագ քրոջ՝ Քորթնի Քարտաշեանի եւ երեխաներու հետ: NEWS.am STYLE-ի լրագրողներու հետ զրոյցի ժամանակ Քիմ ի պատասխան՝ ինչպէս էք հարցին, ըսած է. «Լաւ, իսկ դուք ինչպէ՞ս էք»:

Տեղեկատուական Համաժողովի Բացումը

Շարունակուած էջ 1-էն

այս տարի ունենք շուրջ 13 տոկոս աճ, տպաւորիչ աճ է գրանցում նաեւ արհեստագիտական ապրանքների արտահանումը. առաջին եօթ ամսուայ կտրուածքով միջին թեխնոլոգիատար ապրանքների արտահանումը մեր երկրից աճել է 40,9 տոկոսով, իսկ բարձր թեխնոլոգիատար ապրանքների արտահանումը՝ 34,4 տոկոսով», - ըսա է վարչապետը՝ շարունակելով «Այս ամէնը մեզ վստահութիւն է տալիս, որ Հայաստանում տեղի ունեցող տնտեսական յեղափոխութիւնն իր հերթին կը յանգեցնի արհեստագիտական յեղափոխութեան, եւ մենք կը կարողանանք Հայաստանը դարձնել արհեստագիտական, նորարարական առաջատար երկրներից մէկն աշխարհում, իսկական արհեստագիտական կեդրոն»:

«Այս նպատակը մեզ հասանելի եւ իրատեսական է թուում նաեւ այն պատճառով, որ հայ ժողովրդի բազմաթիւ գաւակներ արհեստագիտական հանրայայտ նորարարութիւնների հեղինակներ են», - նշած է Փաշինեանը՝ թուարկելով մեծ թիւով հայագրի գիւտարարներու անունները, որոնք իրենց նպաստը բերած են մարդու զարգացման. «մենք ընդարձակ հարկային արտօնութիւններ ենք նախատեսել Հայաստանում նոր ստեղծուող արհեստագիտական ընկերութիւնների համար, որոնք մին-

չեւ 2023 թուականն ազատուած են շահութահարկից եւ վճարում են ընդամէնը տասը տոկոս եկամտային հարկ: Որպէս արդիւնք՝ մեր երկրում տեղեկատուական արհեստագիտութիւնների ոլորտը վերջին եօթ տարում աճել է շուրջ հինգ անգամ եւ ամէն տարի կայուն 20-25 տոկոսանոց աճ է գրանցում:

Մենք խնդիր ենք դրել լրջօրէն զարգացնել կրթութիւնը՝ սկսած նախակրթարաններից մինչեւ մագիստրատուրա եւ ասփիրանտուրա եւ ասում ենք, որ մեր երկրում կրթութիւնը պէտք է դառնայ ազգային ապրելակերպ՝ այն տրամաբանութեամբ, որ մեր երկրում մարդը երբեք ու երբեք չպէտք է դադարի սովորել եւ մեր բոլորի՝ սկսած վարչապետից աւարտած համակարգչային աշխատակիցով, կրթական որակաւորումը, մասնագիտական մակարդակն ամէն յաջորդ օր պէտք է աւելի բարձր լինի, քան նախորդ օրը», - յայտարարած է Հայաստանի վարչապետը:

«Մենք հաւատում ենք, որ Հայաստանը կարող ենք դարձնել դրախտ տաղանդաւոր մարդկանց համար», - ըսած է Նիկոլ Փաշինեանը:

Նիկոլ Փաշինեանը բոլոր ներկաներուն յաջողութիւններ մաղթած է «բարձր արհեստագիտութիւններու միջոցով աշխարհը աւելի մարդասէր, աւելի աստուածավախ, աւելի քաղաքակիրթ ու հանդուրժող դարձնելու գործում»:

Պոլսոյ Պատրիարքարանը Պիտի Զրոյցարկէ

Շարունակուած էջ 1-էն


ըսուած է. «Հոկտեմբեր 3-ին տեղի ունեցած քննարկման ներկայ գտնուող բոլոր հիմնադրամներու ներկայացուցիչները կանոնագրի վերաբերեալ կարծիք յայտնեցին, ընթերցուեցաւ հոգեւոր խորհուրդի յայտարարութիւնը: Այնուհետեւ կատարուեցաւ քուէարկութիւն,

որու արդիւնքով ձայները կիսուեցան: Ապա ընդլայնուած կազմով տեղի ունեցած քննարկման ընթացքին հիմք ընդունելով մեծամասնութեան կարծիքը՝ որոշում կայացուած է պատրիարքի ընտրութեան երթալ կանոնադրութեամբ առաջարկուող պայմաններով»:

Այսպիսով՝ փաստացիօրէն Պոլսոյ հայոց պատրիարքարանը

Քաշըքճիի Սպանութենէն Ետք Կացուծիւնը Չէ Փոխուած Միջին Արեւելքի Մէջ

Արաբ նշանաւոր լրագրող ժամալ Քաշըքճիի Պոլսոյ Սէուտական Արաբիոյ հիւպատոսարանին մէջ տարի մը առաջ խորհրդաւոր սպանութենէն ետք Լոս Անճելոս թայմզը յօդուածագիր Նապիհ Պուլոս ի մէջ այլոց կը գրէ. Իսթանպուլի Սէուտական Արաբիոյ հիւպատոսարանին մէջ սէուտցի գործակալներու կողմէ Քաշըքճիի սպանութենէն եւ մարմնի անդամահատումէն ետք կացութիւնը չէ փոխուած: Բովանդակ աշխարհի մէջ արեւանգումները, սպանութիւնները, բռնաբարումները, լրագրողներու անյայտացումներն կը շարունակուին: «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպութեան տեղեկատուութեան համաձայն՝ միայն 2018ին 80 լրագրողներ սպանուած են եւ 348 բանտարկուած, ինչպէս նաեւ 60 ուրիշներ պատանդ առնուած:



Միջին արեւելքի երկիրներու մէջ, Քաշըքճիի Հոկտեմբեր 2, 2018 Իսթանպուլի սէուտական հիւպատոսարանին մէջ սպանութենէն ետք՝ ազատ խօսքի սահմանափակումը մարդու իրաւունքներու ոտնաճարումը եւ քաղաքական գործիչներու բանտարկութիւնը կը շարունակուի: Այս բոլորը ներհակ կ'ընթանան հակառակ բոլոր դրական նախատեսութիւններուն:

Արդարեւ որպէս հետեւանք վերեւ յիշուածին իրաքի մէջ վերջին հինգ օրերու ընթացքին բողոքի զանգուածային ցոյցերուն իբրեւ հետեւանք 83 հոգիներ մահացան: Բայց իրաքի մարդկանց իրաւունքներու պաշտպան կոմիտէի համաձայն, քաղաքական ներկայ տաղանային հետեւանքով, մեռելներուն թիւը բարձրացած է 94ի, իսկ մօտ 4000 ուրիշներ վիրաւորուած են: Միջադէպերուն սաստկագոյնը պատահած է անցեալ Ուրբաթ, երբ 22 հոգիներ սպանուեցան, որոնց մեծ մասը վէրքեր ստացած էին իրենց կուրծքէն եւ գլուխէն:



Կեանքի սղութեան դէմ բոլորի ցոյցերը զսպելու համար իշխանութիւնները դադրեցուցին համացանցի գործունէութիւնը անցեալ Չորեքշաբթի: Իսկ Հինգշաբթի օր ստիպողական կրակմարի վիճակ հաստատուեցաւ, բայց ցուցարարներու կողմէ անտեսուեցաւ եւ այդ որոշումը չեղեալ հռչակուեցաւ յաջորդ առտու ժամը 5ին:

Յաջորդ օրը Շաբաթ էր եւ արտօնուեցաւ որ վաճառատուները վերաբացուին եւ երթեկը շարունակուեցաւ իր բնականոն հունով, Պաղտատի գրեթէ բոլոր փողոցներուն մէջ: Այսուհանդերձ մասնակի ցոյցեր տեղի ունեցած մայրաքաղաքի Ալ թահրի հրապարակ մերձակայ փողոցներուն մէջ: Միւս կողմէ հրապարակը փակ մնաց երթեկութեան համար: Անվտանգութեան ոյժերը հակեցին եւ բանակային զրահապատ կառքերը անդադար շրջագայութեան մէջ էին:

Առողջապահութեան եւ անվտանգութեան պաշտօնեաները յայտնեցին թէ չորս հոգիներ սպանուեցան երբ գինեալ ոյժերը կրակ բացին հրապարակի մերձակայ ցուցարարներուն վրայ որուն հետեւանքով երեք այլ անձեր եւս մահացան:

Արդարեւ արեւտմտեան պետութիւնները հաշտ աչքով չեն նայիր եղելութիւններուն եւ մարդկային իրաւանց պաշտպանները կը դատապարտեն իրեն կողմէ եղած թելադրանքներուն անտեսումները: Իսկ արտաքին աշխարհի կառավարութիւններուն մէկ մասը անտարբեր կ'ուզեն ձեւանալ իրադրութիւններուն դիմաց եւ կարծէք թէ ոչինչ պատահած ըլլայ, սակայն հանրային կարծիքը եւ ընդհանուր ժողովուրդը չի կրնար լուռ մնալ, նոյնն է նաեւ մամուլի եւ լրատուամիջոցներուն համար:

Գալով Ուաշինկթըն Փոսթի յօդուածագիր Քաշըքճիին անոր սպանութիւնը կու տայ այն ենթադրութիւնը թէ Սէուտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Մուհամմատ Պին Սլըմանը կանգնած է այդ սպանութեան ետին: (հեռատեսիլի 60 minutes յայտագրին մէջ հարցազրոյցի մը ընթացքին Պին Սլըման ըսած է թէ ինք կը ստանձնէ ամբողջ պատասխանատուութիւնը որպէս Սէուտական Արաբիոյ ղեկավար, բայց հերքեց որ ինք գործողութեան հրահանգը տուած ըլլայ:

որոշած է չբողոքարկել թուրքիոյ Ներքին գործոց նախարարութեան կողմէ պարտադրուած սահմանափակումը: Այսպիսով՝ ըստ նոր կանոնադրութեան պայմաններուն, Պոլսոյ պատրիարքի աթոռի համար պայքարող թեկնածուներու թիւը խիստ կը կրճատուի:

Պրիսմակ Դասախօսութեան Մը Լուսարձակին Տակ Իսրայէլի Ռազմավարական Հանգոյցները

ԾԱՆՕԹ:

Հիւսթընի համրայայտ Ռայս Համալսարանի (Rice University) կողքին 1993 թուականէն ի վեր կը գործէ «Ճէյմս Պէյքըր Բ. Հանրային Եւ Հասարակական Գիտութիւններու Գերատեսչական Կենտրոնը»:

Այս կենտրոնի ուսումնասիրութեանց առանցքը կը կազմեն Միջին Արեւելքի, Մեքսիքոյի, Հանրային Տնտեսութեան, Նորարարական Եւ Գործարարական գիտութիւններու պատկանող միւլթիլինգուալ Եւ Կրթութեան Կենտրոնը: Իր ակադեմիական աշխատանքներու կողքին, Կենտրոնը կը գործակցի նաեւ ազգային Եւ միջազգային ակադեմիական անձնակազմի հետ: Այս պատկանող ղեկավարներու հետ, ժամանակակից հարցերու մասին անոնց տեսակետը Եւ լուսաբանութիւնները բերելու համար հետաքրքրուող հանրութեան:

Կենտրոնը հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու (ԱՄՆ) նախկին Պետական Քարտուղար Եւ քաղաքական գործիչ Ճէյմս Պէյքըրի Բ-ի ջանքերով, իսկ հաստատութեան գործադիր Տնօրէնի պաշտօնը կը վարէ Սուրիոյ, ապա Իսրայէլի մօտ Ամերիկայի Միացեալ Նահանգներու երբեմնի դեսպան Էտուար Գրեյնը:

Էտուար Գրեյնը ԱՄՆ-ի յարգուած Եւ փորձառու դիւանագետներէն մէկն է Եւ պատասխանատու պաշտօններ վարած երկրի 8 նախագահներու պատկանող վարչակարգային դրութիւններուն մէջ: Պետական Քարտուղար Ճէյմս Պէյքըրի հետ ան մասնակարգաբար առանցքային դեր խաղացած է արաբ-իսրայէլեան հակամարտութիւնը խաղաղ միջոցներով լուծելու գործընթացին մէջ, ու այդ պատճառով Միջին Արեւելքի քաղաքական բեմին վրայ հաստատուած է լայն ծանօթութիւններ Եւ կայտեր:

Յ.Ս.

ՅՈՎԱԿԻՄ ՍԵԼՔՈՆԵԱՆ



Իր ծրագրեալ ակադեմիական աշխատանքներու ծիրին մէջ «Ճէյմս Պէյքըր Բ. Հանրային Եւ Հասարակական Գիտութիւններու Հետազօտային Կենտրոնը» Հինգշաբթի 26 Սեպտեմբերին 2019 թուականին իր յարկէն ներս դասախօսելու հրաւիրած էր Իսրայէլեան Բանակի Գաղտնի Սպասարկութեանց նախկին պետ Զօր. Ամոս Եատլինը: Իր քառասնամեայ զինուորական պաշտօնավարութեան աւարտին Ամոս Եատլին Թէլ Աւիւի համալսարանին մէջ հաստատած է «Ռազմավարական Եւ Ազգային Անվտանգութեան Կենտրոն մը», որ կը զբաղի Իսրայէլի Միջին Արեւելքի քաղաքական, զինուորական, գաղտնի սպասարկութեանց Եւ Իրանի աթոմական ուժի գործածութեան հարցերով Եւ անոնցմէ բխող ռազմավարական մարտահրաւերներու ուսումնասիրութեամբ:

Թէեւ Զօր. Եատլին իր դասախօսութեան ընթացքին զգալիորեն յայտարարութիւններ չըրաւ Եւ չի խօսեցաւ պետական գաղտնիքներու մասին, այսուհանդերձ իր մէկ ժամէն աւելի տեւող խօսքին ընթացքին պարզաբանեց Իսրայէլի ռազմավարական նկատառումները Եւ տեսակէտները, ինչպէս նաեւ տուաւ ապագայ հաւանականութիւններու Եւ զարգացումներու պատկեր մը, որ Միջին Արեւելքի հարցերով զբաղող, Եւ ներկայ եղող դիւանագիտական անձնակազմի ներկայացուցիչներու Եւ մասնագէտներու մօտ իր անդրադարձը ունեցաւ:

Զօր. Եատլին իր դասախօսութեան իբրեւ հիմնակէտ առաւ Իսրայէլի վերջին խորհրդարանական ընտրութիւնները Եւ անոնց հետեւանքով կազմուելիք նոր կառավարութեան առջեւ ցցուող ռազմավարական մարտահրաւերները:

Իր կարծիքով գլխաւոր երկու խմբակցութիւնները, որոնք ընտրողներու մեծամասնութեան քուէներուն տիրացած էին, այսինքն Պէնիամին Նաթանհաճուի գլխաւորած ցանկը, որ «Լիքուտ» կուսակցութեան հովանիին տակ 55 հոգինոց դաշինք մը կը կազմէր սպառնալից կրօնամոլ խմբակցութիւններու աջակցութեամբ, բնաւ չի տարբեր իրեն հակառակորդ Պէնիամին Կանիթի Եւ Եատլին Լապի-

տի «Ճերմակ Եւ Կապոյտ» կուսակցութեան գլխաւորած համաձայնական ցանկէն, որ կը ցած էր 54 հոգինոց զինակցութիւն ի մի բերել: Երկուքն ալ աջահողմեան հակումով Եւ համոզումով, խորապէս ազգայնական խմբակցութիւններ են, որոնք Իսրայէլի ծաւալապաշտողական քաղաքականութեան ջատագովները հանդիսացած են ցարդ, թէեւ ներքին հարցերու կապակցութեամբ տարբեր մօտեցում մը որդեգրած են: Իսկ ամէնէն մեծ պարտեալները կը հանդիսանան Իսրայէլի ձախակողմեան ուժերը գլխաւորութեամբ «Աշխատաւորական կուսակցութեան» Եւ «Խաղաղութիւն Հիմա» շարժումի կողմնակիցներուն, որոնք թէեւ անցեալին ազդեցիկ ներկայութիւն մը եղած են Իսրայէլեան խորհրդարանի (ԳնէՍէԹ) մէջ, սակայն վերջին տաս տարիներուն աննշան ներկայութիւն մը դարձած են երկրի քաղաքական կեանքէն ներս:

Հետեւաբար այս աջակողմեան խմբակցութիւններէն մին է որ պիտի տնօրինէ Իսրայէլի ապագայ ներքին Եւ արտաքին քաղաքականութեան տրամադրութիւնները Եւ ուղղութիւնը, եթէ անոնցմէ մին յաջողի կառավարական դահլիճ մը կազմելու: Ու եթէ այդ կառավարութիւնը կազմուի ու գործէ այնպէս ինչպէս կ'ակնկալեն ներքին Եւ արտաքին դէտերը, բնական է որ շատ բան պիտի չի փոխուի Իսրայէլ-Պաղեստինեան հակամարտութեան այժմու ընդթէն կամ ակնկալուած զարգացումէն, Եւ հետեւաբար Միջին Արեւելքի քաղաքական խորհրդուն պիտի մնայ տակաւին իր լարուած, տագնապային հանգրուանին մէջ:

Մեկնելով այս վարկածներէն

զօր. Եատլին Իսրայէլի առջեւ ցցուող մարտահրաւերները հետեւեալ ձեւով ընտրուեց:

Ա- Իրանական գործօնը:

Իսրայէլ Եւ Իրանական Իսլամական Հանրապետութիւնը տասնամեակներէ ի վեր կը գտնուին հակադիր դիրքերու վրայ Եւ կը պայքարին ամէն մարզերէ ներս, թէեւ երկու կողմերը ցարդ խուսափած են զինուորական ընդհանրումէ մը: Վարչապետ Նաթանհաճուի ղեկավարութեան տակ մասնաւոր, Իսրայէլ միջազգային գետնի վրայ տաս տարիէ ի վեր անհաշտ պայքար կը մղէ Իրանի դէմ, անոր աթոմական ուժի տիրանալու ձգտումները Եւ շրջանային ազդեցութիւնը տարածելու ջանքերը իր գոյութեան սպառնացող վտանգ մը ներկայացնելով: Այդ պայքարը պատճառ հանդիսացաւ որ երկար բանակցութիւններէ ետք Արեւմտեան Եւրոպական երկիրներ, ներառեալ Չինաստան, Ռուսաստան Եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներ նախկին նախագահ Պարաք Օպամայի վարչակարգի օրերուն, Իրանի Իսլամական Հանրապետութեան հետ կնքեն «Միացեալ Լայնիմաստ Գործարք» մը (Joint Comprehensive Plan of Action - JCPA) 2015 թուականին, որուն համաձայն Իրանի Իսլամական Հանրապետութիւնը յանձնառու կ'ըլլար իր աթոմական զարգացումի ծրագիրը սահմանափակելու Եւ համակերպելու խաղաղ նպատակներու գործածութեան համար դրուած պայմաններու: Հակառակ այս համաձայնութեան տրամադրութիւններուն Նաթանհաճուի Իսրայէլը շարունակեց պահանջել որ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը ամբողջովին կասեցնէ իր գործունէութիւնը այդ մարզէն ներս, հրաժարի շրջանային նպատակները հետապնդելէ Եւ առկախէ «հանրապետական կողմեր գինելու Եւ ֆինանսաւորելու» իր քաղաքականութիւնը: Վարչապետ Նաթանհաճուի անցող ընդդիմութիւնը, Եւ յառաջ տարած անդուլ պայքարը, պատճառ եղան որ ԱՄՆի Նախագահ Տանըլտ Թրամի ընտրական նկատառումներէ մղուած յետո կոչէ իր երկրի մասնակցութիւնը այս գործարքին, Եւ տնտեսական պատժամիջոցներ վերահաստատէ Իրանի դէմ, որպէսզի վերջինս ամբողջովին ենթարկուի իրմէ պահանջուած պայմաններուն:

Ըստ զօր. Եատլինի Իսրայէլի մէջ անկախ մտածող մասնագէտներու մօտ հետզհետէ այն կարծիքը Եւ համոզումը կը տարածուի թէ Ամերիկայի Միացեալ Նահանգներու՝ Իրանի հետ «Միացեալ Լայնիմաստ Գործարք»-էն հրաժարուելը հիմնական սխալ մըն էր, որ դժուար կացութեան ենթարկեց Իսրայէլը: Զօր.Եատլինի բացատրութեամբ այդ համաձայնութիւնը Իսրայէլի համար աւելի նպաստաւոր դրութիւն մը ստեղծած էր իր «թերութիւններով» հանդերձ: Ըստ Զօր. Եատլինի թէ՛ Ամերիկա Եւ թէ՛ Իսրայէլ պէտք է գոհանային եղած համաձայնութեամբ, օգտուելին անոր դրական տրամադրութիւններէն Եւ սպասելին անոր կանոնական մահազրկին, դեռեւս 2026 կամ 2027 թուականին, որպէսզի նոր բանակցութիւններու ճամբով կարենային յաւելեալ զիջումներ ստանալու Իրանի Իսլամական Հանրապետութեան: Այդ համաձայնութիւնը բաւարար երաշխիքներ տուած էր Իսրայէլի ապահովութեան համար» ըսաւ զօր. Եատլին, «հետեւաբար

ինչու՞ այս միջազգային տակնուվրայութիւնը ստեղծուեցաւ այս հանգրուանին» հարց տուաւ զօրավարը: «Կարելի է Իրանի Իսլամական Հանրապետութեան ամէն ինչ պահանջել Եւ ոչինչ տալ» յայտնեց զօր. Եատլին: «Պէտք է մոռնալ որ Իրան հազարամեակներու պատմութիւն ունեցող երկիր մըն է, իր շահերը ունի Եւ իր ռազմավարական նպատակները Միջին Արեւելքի մէջ: Հետեւաբար, նկատի պէտք է առնել այս կարեւոր կէտերը Եւ ըստ այնմ բանակցիլ անոնց հետ» պնդեց զօրավարը:

Բ- Փոխանորդաբար (by proxy) կուուող ուժեր:

Միջին Արեւելքի մէջ տիրող լարուածութիւնը այժմ կը գտնուի իր գագաթնակէտին: Իրանի դէմ դրուած ամերիկեան տնտեսական Եւ քաղաքական պատժամիջոցները անել կացութեան մատնած են երկիրը Եւ անոր ժողովուրդը: Իրանի Իսլամական Հանրապետութիւնը չէր կրնար այդ պատժամիջոցներուն նկատմամբ անտարբեր մնալ Եւ փոխադարձեց այնպիսի ձեւով, որ առանց ուղղակի զինուորական ընդհանրումի դուռ բանալու, տագնապային կացութիւն մը ստեղծեց Արաբական Մոցի մէջ՝ միջազգային քարիւղային հոսքը ենթարկելով արգելքներու Եւ խաբանումի սպառնալիքին:

Միաժամանակ Իրան իր դէմ առնուած քայլերուն դէմ փոխանորդաբար կուուող ուժերու միջոցով պայքար կը մղէ, գործածելով տեղական կողմեր ինչպիսին են Եթէմէնի «Հուժի»ները Եւ Լիբանանեան «Հըզպալլա» շարժումը Եւ գաղտնաբար գինելով գանոնք: Սառուտական Արաբիոյ «Արամք» գտարանին դէմ գործածուած հրթիռներու ճշգրտութիւնը կը փաստէ, որ զինուորական գետնի վրայ Իրան իր նախնական հրթիռները կատարելագործած է այնպիսի ելեկտրոնական սարքաւորումով մը, որ անոնք կրնան խոցել պաշտպանողական ուժերը Եւ հասնիլ իրենց թիրախին:

Իսրայէլի համար ամէնէն մտահոգիչը այն է որ Լիբանանեան «Հըզպալլա» շարժումը իր տրամադրութեան տակ ունի այնպիսի բազմահազար արդիականացած հրթիռներ գորս կրնայ գործածել Իսրայէլի դէմ ապագայ զինուորական կարգուսարքը: Զօր. Եատլինի կարծիքով եթէ մեծ թիւով հրթիռներ միաժամանակ արձակուին Իսրայէլի դէմ, երկիրը անկարող պիտի ըլլայ պաշտպանելու ինքզինքը այնպիսի գործի մը դէմ: Ինչպէս անցնող 18 ամիսներուն փաստուեցաւ Իսրայէլ հիմնական պատասխան մը չունի կազալի կողմէ արձակուած առտնին ընդթ Եւ ծնունդ ունեցող հրթիռներու դէմ, որոնք սահմանակից բնակչութեան կեանքը հիմնովին խանգարած են ու ամէն վայրկեան վտանգ կը հանդիսանան քաղաքային բնակչութեան: Հետեւաբար, Իսրայէլ պէտք է մտածէ կանխարգելիչ քայլերու մասին առանց զանց ընելու նախադրած միջոցառումի մը կարելիութիւնները: Ուրեմն, ըստ զօր. Եատլինի, հաւանական է որ Իսրայէլ-Լիբանանեան սահմանը կրկին բռնկի եթէ Իսրայէլ ի վիճակի չըլլայ լարուածութիւնը զսպելու քաղաքական միջոցներով:

Գ- Իսրայէլ- Պաղեստինեան Հակամարտութիւնը:

Հնչակեան Քսան Կախաղաններու Ոգեկոչումը Եւ Red («ՄերԺում») Վաւերագրական Ֆիլմի Ցուցադրութիւնը Թորոնթոյի Մէջ



Թորոնթոյի Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը այս տարի փոխանակ յունիս ամսուան մէջ կատարելու Հնչակեան Քսան Կախաղաններու յիշատակումը, գայն կատարեց 27 սեպտեմբերին, յայտնի թուրք ընկերվարական Քատիր Աքընի պատրաստած RED («ՄերԺում») վաւերագրական ժապաւէնին ցուցադրութեամբ եւ հեղինակին բանախօսութեամբ:



Քատիր Աքըն 2010ին Isci DŞnyasi («Գործաւորի Աշխարհը») պարբերաթերթին խմբագրապետն է: Այդ տարուան յունիս ամսուան թիւին մէջ հրատարակութեան համար աշխատակիցներէն մէկէն «Փարամազը չմոռնանք» խորագրեալ յօդուած մը կը ստանայ: Այդ թուականին Փարամազի մասին ո՛չ ինք տեղեկութիւն ունի, ո՛չ ալ յօդուածը թարգմանաբար դրկած անձը: Անտեղեակ են նաեւ իր թուրք եւ հայ ընկերվարական ընկերները, կամ անոնց տեղեկութիւնը չափազանց մակերեսային է: Այս կացութիւնը թուրքիոյ մէջ ընկերվարական շարժումի պատմութեան լաւատեղեակ Քատիր Աքընին ընդվզում կը պատճառէ: Կ'ընդվզի, որ թուրքիոյ մէջ աւելի քան հարիւր տարի առաջ հայերու կողմէ սկսուած ընկերվարական շարժումի պատմութիւնը անտեսուած է: Անտեսուած է՝ պարզապէս հայերու կողմէ սկսուած ըլլալուն պատճառով, «չկայ» նկատուած է: Դիտումնաւոր կերպով «մոռցուած» է:

Ազատութեան, հաւասարութեան, արդարութեան եւ ժողովուրդներու եղբայրացեալութեան համար պայքարող Քատիր Աքըն եւ ընկերները կը կազմակերպեն լուսաբանութեան, գաղափարի փոխանակման հաւաք մը, որուն կը մասնակցի ընկ. Ալէք Քէօզկերեան՝ Պէյրութէն: Կ'որոշեն 20ներու նահատակուած Կ. Պոլսոյ Պայազիտ

հրապարակին վրայ հաւաքուելի, մեխակներ դնել ու այս մարտիրոսներուն լոգունները կրկնել՝ «Մեզ, քսաններս կը կախէք, բայց քսան հազարներ պիտի հետեւին մեզի», «Դուք մեր մարմինները կրնաք կախել միայն, իսկ մեր գաղափարը՝ ոչ: Վաղը Արեւելքի հորիզոնին վրայ պիտի ողջունենք սոցիալիստական Հայաստանը»: Այսպիսով, Կ. Պոլսոյ մէջ, անմահներու անշնչացումէն 98 տարի ետք, 2013ի յունիսին, 20ներու յիշատակումը անգամ մը եւս կը կատարուի: Առաջին յիշատակումը կազմակերպուած է մեր աւանդական երեք կուսակցութիւններուն կողմէ՝ 1921ին:

Քատիր Աքըն կը լծուի պրպտումներու եւ 2016ին կը հրատարակէ «Հայ Յեղափոխական Փարամազը» խորագրեալ գիրքը, որ կ'արժանանայ հինգ վերահրատարակութեան: Տարի մը ետք կ'երթայ Պէյրութ, ուր կը ծանօթանայ ընկ. Եղիկ Ճէրէճեանին ու ծնունդ կ'առնէ RED վաւերագրական ժապաւէնին գաղափարը: Նկարահանումները կը կատարուին Ժընեւի, Պագելի, Պէյրութի եւ Կ. Պոլսոյ զանազան շրջաններուն մէջ: Թուրքիոյ մէջ տիրող քաղաքական կացութիւնը եւ կարգ մը դժուարութիւններ նկատի առնելով՝ Քատիր Աքըն կարելի եղած չափով արագ կ'աշխատի: 55 վայրկեան տեւող ժապաւէնը ճոխ է հարցազրոյցներով եւ վաւերագրութիւններով:



Քսաններու ոգեկոչման միջոցառումը տեղի ունեցաւ Թորոնթոյի Հայ Երիտասարդական Կեդրոնի շարժանկարի ցուցադրութեան շարժար սարքաւորումներով օժտուած «Համագրային» թատերասրահին մէջ, ներկայութեամբ ստուարաթիւ հանդիսատեսներու: Հնչեցին Քանախաղանի եւ Հայաստանի օրհներգները: Բացման խօսքով բեմ բարձրացաւ հանդիսավար ընկե-

րուհի Սոնա Չորպաճեան: Անուշեան: Ողջունեց եկեղեցիներու, կազմակերպութիւններու ներկայացուցիչներն ու յարգելի ներկաները: Ձայնը՝ համապատասխան օրուան միջոցառման, խօսքը՝ ցնցիչ. «104 տարի առաջ՝ 1915 յունիս 15ին, Պոլսոյ Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ հնչակեան քսան տիտաններ խիզախօրէն բռնեցին անմահութեան ճանապարհը: Անոնք հաւաքական նահատակութեամբ հայ ազատագրական պայքարի ամենափայլուն դրուագներէն մին կերտեցին»: Հակիրճ գիծերով տուաւ Քատիր Աքընի կենսագրականը ու զինք բեմ հրաւիրեց:

Աքըն թրքերէնով, իր գիտցած միակ լեզուով, կարգաց իր խօսքը: Տեղեկացուց Փարամազի եւ անոր 19 ընկերներուն գոյութեան եւ անոնց գործունէութեան պատահաբար ծանօթանալուն, «Փարա-

լերէն ենթախորագրեր ունեցող վաւերագրական արդէն իսկ ցուցադրուած էր Ժընեւի, Լոնտոնի, Համպուրկի, Պերլինի, Պեռնի, Պէյրութի եւ Փարիզի մէջ: Կը ցուցադրուէր նաեւ Կ. Պոլսոյ զանազան սրահներուն, ինչպէս նաեւ Անքարայի, Անթալիոյ եւ Իզմիրի մէջ: Ան իր այս վաւերագրականը թուրքիոյ մէջ ցուցադրած է յատկապէս ճախակողմեաններուն, ակադեմիկաններուն եւ պատուաւոր պատմաբաններուն՝ այն մտածուածով, որ եթէ անոնց մտայնութիւնները փոխուին, հասարակութեանն ալ կը փոխուի: Եթէ անոնց դատողութիւնները փոխուին, ժողովուրդին սուտերով ձեւաւորուած մտայնութիւնն ալ կը փոխուի:

Աքընի խօսքը՝ հայերէն ու անգլերէն թարգմանութեամբ, ինչպէս նաեւ 20ներու մասին ամփոփ տեղեկութիւններ, յատուկ գրքոյկի



մագ» գիրքի հրատարակութեան եւ վաւերագրականին պատրաստութեան գործընթացին մասին: Ան յատկապէս շեշտեց, թէ ինք յոյս ունի, որ այս վաւերագրականը պատմական ճշմարտութիւնները երեւան հանելու պիտի ծառայէ եւ ցոյց պիտի տայ, որ Յեղասպանութիւնը ոչ միայն մօտ մէկ միլիոն հայերու սպանութիւնն էր, այլ նաեւ մտաւորական եւ մշակութային մեծ ժառանգութեան մը ոչնչացումը: Ըսաւ, որ Յեղասպանութիւնը իր ապրած հողերուն վրայ ընկերվարական շարժումին արմատներուն վնաս հասցուցած էր եւ հետագային այդ ճախակողմեան շարժումին անփորձ մնալուն պատճառ եղած: Աքըն յայտնեց, որ թրքերէնով պատրաստուած եւ անգ-

մը ձեւով ներկաներուն արդէն իսկ բաժնուած էր: Վաւերագրականին ցուցադրութենէն յետոյ, Քատիր Աքըն իրեն ներկայացուած գրաւոր հարցումներուն պատասխանեց թարգմանիչի միջոցաւ: Հուսկ, յարգելի հիւրին յանձնուեցաւ յուշանուէր մը՝ ամերիկահայ հուշակաւոր արուեստագէտ Մայքըլ Արամի արուեստի մէկ գործը, ձեռամբ Թորոնթոյի ՄԴՀԿ վարիչ մարմինի ատենապետ ընկ. Համբիկ Թաթուլեանի: Հանդիսութեան աւարտին, սրահի մուտքին վաճառքի դրուեցան «Փարամազ» հատորին 40 օրինակները, որոնք Քատիր Աքըն մէկ առ մէկ մակագրեց: Թղթակից

Նորթրիճի Համալսարանը Ստացած է

Շարունակուած էջ 1-էն
նէ հետագայ հետաքրքրութիւնը հաւաքական հայկական կեանքի նկատմամբ, մասնաւորապէս վերջին 100 տարուայ ընթացքին, երբ ականատես եղած ենք անբեւեակայելի դժուարութիւններու, ինչպէս նաեւ վերածնունդի, որ վեր կը բարձրանար մոխիրներէն»:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Ամերիկեան Բժշկական Առաքելութիւնը Բուժօգնութիւն Է Տրամադրում Հայաստանում եւ Արցախում



2015 թուականից ի վեր, Հայաստան համահայկական հիմնադրամի ԱՄՆ արեւմտեան շրջանը համագործակցում է «Կլենտոյլ ադ-վենտիստ» բժշկական կեդրոնի բուժաշխատողների հետ, կազմակերպում նրանց այցը Հայաստան ի նպաստ հայրենի բժշկութեան զարգացման: Այս կարեւոր նախաձեռնութիւնը ծնունդ է «Կլենտոյլ ադ-վենտիստ» բժշկական կեդրոնի մօտ եւ արդէն 5-րդ տարին է, որ անվճար բուժօգնություններ է մատուցում Հայաստանում: Սկսած 2018 թուականից, արդէն երկրորդ անգամ, բժիշկները մեկնում են նաեւ Արցախ եւ իրենց փորձը փոխանցում արցախցի գործընկերներին: Այս հինգ տարիների ընթացքում, հազարավոր խորհրդատուութիւններ եւ վիրահատութիւններ են անցկացուել, հիւանդանոցներին տրամադրուել է բարձ-

«Ադվենտիստ հելթսը» Հիմնադրամի միջոցով բարձրակարգ բժշկական տեխնիկա է նուիրաբերել Ստեփանակերտի հանրապետական բժշկական կեդրոնին, ինչպես նաեւ վերապատրաստման դասընթացներ են կազմակերպուել մեր բժիշկների հետ:

1951 թուի Առաջնորդի վախճանումով ներքին պայմաններ չետաձգեցին Կարապետ Արքեպիսկոպոսի Յուճահայ թեմի յաջորդին ընտրութիւնը: Կիլիկիոյ 1956 թուի Կաթողիկոսական ընտրութեան հետ կապուած անհիմն պատճառներով մի քանի թեմեր բաժնուեցան Մայր Աթոռէն, որոնցմէ մին եղաւ Յուճահայ թեմը, հակառակ անոր որ Ամենայն Հայոց Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսը Հայրապետական Պատուիրակ մը նշանակած էր արդէն եւ ուղարկած Աթէնք: Քաղաքական նոյնքան անհիմն պատրուակներով Պատուիրակը չէր կրցած մնալ իր պաշտօնին վրայ, եւ 1958-ին, հակառակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խնամքին եւ հոգածութեան, Յուճահայ թեմը կը կիսուէր եւ մասամբ Կիլիկիոյ Աթոռին կ'ենթարկուէր: Առ այժմ Էջմիածնական եւ Կիլիկեան թեմեր անկախաբար իրենց վարչականներով կը զբաղեցնեն Յուճահայ գաղութը: Իրողութիւնն այն է որ միայն Հայ Եկեղեցին պիտի շահէր եթէ թեմական կարգադրութիւնները կատարուէին Մայր Աթոռի գիտութեամբ եւ առանց կանոնական անջատումի, եւ սակայն այդ կը պահանջէր պատուաբեր կամք եւ արի կեցուածք:

Կարապետ Արքեպիսկոպոսի Վախճանը

Յուճահայ թեմի կորովի Առաջնորդ Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմեան կը վախճանէր 1951 թուին, եւ Մայիսի 6-ին

Շար.ը էջ 19

Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

Ճատ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:

Նախքան Ձեր ծրագրերուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կառաւարկուի՝

- 1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
- 2- Ունիք Աւել թաղման ու յուղարկարարութեան ծառայութիւններ յարմար գիներով

Մանրամասնութեան համար դիմել՝

ISABEL CRISTINA KEMANIAN
Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
(818) 284-8754
Email: isabel.kemanian@sci-us.com

«Մարդ Իր Հողին Կրայ Պետք Է Ապրի»

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՍ

«Հայոց ցեղասպանութեան մասին գրեթէ բան չենք գիտեր»:

Գործակիցս՝ Պերնիթ Օլսոնն է, Նորվեգիոյ մեր գրասենեակի աշխատակազմէն մին: Օսլո՝ Նորվեգիա իմ վերջին աշխատանքային այցելութեան ընթացքին առիթ եղաւ անդրադառնալու հայ ժողովուրդին ու անոր պատմութեան:

Նորվեգիացիք գիտեն իրենց ազգակից մեծ մարդասէր Ֆրիտիոֆ Նանսենի մասին: Գիտեն, որ ան մարդկային հաւաքական կեանքերու համար բարեխիտական շատ գործեր կատարած է, յատկապէս՝ Ա. Համաշխարհային պատերազմի ընթացքին տեղահանուած ժողովուրդներու ինքնութեան եւ անձնագրի ապահովութեան հայթայթման գործին մէջ: Ան նաեւ առնչուած է հայ ժողովուրդին հետ: Բայց, թէ ինչ էր ճիշդ այդ առնչուածութիւնը եւ անոր պատմութեան հետեւանքները, այդ բոլորին շատ ծանօթ չէին:

«Հայ ժողովուրդը երախտապարտ է Նանսենի եւ անոր տածած հոգածութեան եւ նեցուկին՝ Հայոց ցեղասպանութեան ընթացքին հայ գաղթականներուն իրաւական հիմք տալու իր նախաձեռնութիւններուն համար»: Այս եղաւ լաւ սկիզբ մը, որ հայ ժողովուրդին պատմութիւնը ներկայացնեմ Նորվեգիոյ մէջ տարբեր հանդիպումներու ընթացքին: Հոսկէ կարելի էր տեսնել, թէ ամէն մարդ չէ, որ գիտէ հայ ժողովուրդին պատմութիւնը: Տակաւին բաւական աշխատանք ունինք կատարելու՝ մեր պատմութիւնը ծանօթացնելու աշխարհին: Նորվեգիան այն երկիրներէն է, որ հայտնաբերած պատմական այդքան ալ ծանօթ չէ: Երեւի անոր աշխարհագրական հեռավորութիւնն ալ չէ նպաստած առնչուելու հայոց պատմութեան տուեալներուն հետ:

Բայց հետաքրքրականը այն էր, որ հայկական իրականութեան հանդիպելէ առաջ հանդիպեցայ ոչ հայկականին: Պատահականութիւն թէ ոչ, բայց արժէ նաեւ տեսնել ուրիշը իր կեանքի մաքառումներուն մէջ:

Պերնիթի հետ տեղական ճաշարանի մը մէջ ենք: Միջին տարիքի մարդ մըն էր, որ կը փորձէր մեր ապսպրանքները ապահովել: Պերնիթ ոչ մէկ տեսակ դժուարութիւն ունէր հաղորդակցելու հետը: Կը խօսէին տեղական լեզուն եւ այդ ալ՝ սահուն: Բայց կրնայի տեսնել, որ անոր դէմքի գիծերն ու, տակաւին, խօսակցական ոճը երոպական չէր: Բայց այս օրերուն, երբ աշխարհի բնակչութիւնը տեւապէս տեղաշարժի մէջ է, ուր միջին հաշուով եւ տարեկան համեմատութեամբ աւելի քան երկու հարիւր քառասուն միլիոն մարդ կը լքէ իր «տունը» եւ կը մեկնի այլ տեղ՝ տարբեր պատճառներով, դժուար է ըսել ու նկարագրել, թէ ինչպէ՞ս է համադրուած ընկերային հաւաքականութիւններու ու անոնց համակարգերու ինքնութեան բնորոշումը: Բայց այս մարդուն մէջ կար քիչ մը ինձի նմանող հարազատ մշակութային կենցաղի երեւոյթներ: Շատ արագ սկսայ մտածել, որ «այս մարդը կրնայ մեր կողմերէն ըլլալ...»:

Իսկ «մե՞րը»...

Կրցայ կարգալ իր անունը իր բաճկոնին վրայէն՝ Սեմ Ռամատան: Ռամատան անունը լիբանանեան ընտանիք է. համալսարանական տա-

րիներուս ունէի այդ ընտանիքէն դասընկեր մը, հետեւաբար շատ արագ կերպով սկսայ հետը խօսիլ արաբերէն:

Սեմին դէմքի արտայայտութիւնը ամբողջութեամբ փոխուեցաւ: Ուրախ էր, որ կը տեսնէր իր «երկրէն» մարդ մը, որ կը խօսէր նաեւ իր լեզուն:

«Ռաս նապաաէն եմ,- ըսաւ Սեմ: - Լիբանանի քաղաքացիական պատերազմին մեր շրջանը շատ վտանգաւոր էր, չկրցանք դիմանալ եւ գաղթեցինք այս երկիրը»:

Սեմը Պէյրութը ձգած էր, երբ հագիւ տասնինը տարեկան էր: Ան արդէն այսօր չափահաս է: Անկախ այն երեւոյթէն, որ տիրապետած է տեղական լեզուն, բայց արաբերէնը տակաւին տոկոսն է: «Պէյրութի օրերով կ'ապրիմ», ըսաւ ան: Ան ամէն ջանք ի գործ դրաւ, որպէսզի լաւ գգանք: Տան ու հողին կարօտն էր...

Էվան Խրուսթիայէն է: Երիտասարդ օրիորդ մը, որ իր երկիրը ձգած եւ եկած է Նորվեգիա: Ան կ'աշխատի՝ որպէս սպասեակ այլ ճաշարանի մը մէջ: Տեղական լեզուն շատ չէ տիրապետած: Գործակիցիս՝ Պերնիթին հետ բաւական «չարհարուեցաւ», մինչեւ որ հասկացաւ, թէ ինչ կ'ուզէինք ճաշել այդ օր: Այդ չարհարանքին հետ կար նաեւ խօսիլ: Վերջապէս, օտար երկրի մէջ էր...

Տեսնելով, որ երիտասարդ էվան կը տքնի, փորձեցի անզերէն խօսիլ, որպէսզի քիչ մը աւելի լաւ գգայ: Ծաշի ապսպրանքն անդին՝ իրեն ըսի. «Բայց շատ գեղեցիկ երկիր մը ունիք: Եղած եմ Խրուսթիայ»:

«Այո՛, գիտեմ,- ըսաւ էվա,- բայց տնտեսական տառնապը մեզ կը ճնշէ: Ստիպուած էի ձգել տունս եւ երկիրս ու հոս գալ, որպէսզի ապրուստ ապահովեմ»:

Եւ կը սկսիս մտածել: Այս օրերու աշխարհը ո՞ւր հասած է, որ մարդ ստիպուած պիտի ըլլայ ձգել իր հարազատ ու գեղեցիկ տունը, հողը եւ երթաց ուրիշ տեղ...

Ապրելու՞...

Ալեքսին դէմքին վրայ տարբեր ուրախութիւն եւ քաջալերանք մը եկաւ, երբ իմացաւ, որ Կիպրոսէն եմ: Ալեքսը երիտասարդ տղայ մըն է, որ կու գայ Յունաստանի Ռոտոս կղզիէն: Յունական գործօնը նաեւ իր ազդեցութիւնը ունեցաւ, որ մեր հաղորդակցութիւնը աւելի ջերմանայ: Եղած է աւելի քան մէկ տարի, որ Ալեքս եկած է Օսլո: «Տնտեսական տագնապը Յունաստանի մէջ պատճառ եղաւ, որ այս կողմերը գամ, որպէսզի աւելի լաւ աշխատանք եւ եկամուտ ճարեմ», ըսաւ Ալեքս:

Պատերազմ ու տակաւին՝ տնտեսական ու ընկերային բարդ իրավիճակներ: Բանաստեղծին հետ դուն ալ կը մտաբերես. «Աշխարհն, այո՛, շուտ է եկել»: Երեւի ներկայ օրերու աշխարհը եղած է այնքան աննպաստ, որ մարդ չի կրնար այլեւս ապրիլ գէթ իր հողին վրայ:

Սաթօ Մովսիսեանը ծնած է Նախիջեան: 1988 տարիներու պատերազմին ու ողբերգութիւններուն ան դուրս եկած է տարածաշրջանէն: Ան նախ հաստատուած է Հայաստան, որմէ ետք՝ Ռուսիա, ապա 1994-ին անցած է Նորվեգիա:

Սաթոյին հարցուցի իր տարիքը. «Յիսունն առաւել, առաւել...», ըսաւ ան: Այդ «առաւել, առաւել» արտայայտութեան մէջ



կրցայ տեսնել, թէ որքան կեանքի փորձ կուտակած է ան:

Սաթոն կ'աշխատի տեղական մեծ գործարանի մը մէջ, բայց ապրելով դարաբաղեան պատերազմի ու անոր տեղահանութեան արհաւիրքը՝ կրցած է իր մէջ ամրապնդել ոչ միայն ապրուստ ճարելու հեւքը, բայց նաեւ՝ ազգային կեանքի ու արժէքներու գիտակցութիւնը եւ անոնց սատարումը:

«Մտաւորապէս երկու հարցար հայ կ'ապրի հոս,- ըսաւ Սաթոն: - Անոնք տարածուած են երկրի ամբողջ տարածքին: Այս իմաստով, բոլորը համախմբել շատ դժուար բան մըն է: Հայերու կարեւոր մասը եկած են Հայաստանէն եւ Ազգայնագիտական փոքր թիւ մըն ալ՝ Պարսկաստանէն եւ Սուրիայէն:

«Ունինք հինգ անդամներէ բաղկացած ազգային խորհուրդ մը,- ըսաւ Սաթոն: - Կը փորձենք որոշ գործունէութիւն կազմակերպելով՝ հայերը քով-քովի բերել», եղաւ Սաթոյին ոչ այնքան յուսադրող ներդրումները:

Սաթոն կը գիտակցի, որ սեփական եկեղեցայնէն չունենալը չի նպաստեր գաղութին կազմաւորման: «Մեր գլխաւոր նպատակը մեր սեփական եկեղեցին ունենալն է», ըսաւ ան: Գաղութի խորհուրդը կ'աշխատի, որպէսզի իրականացնէ այս ծրագիրը:

Գաղութը չունի մնայուն եկեղեցական հովիւ: Դանիայէն հոգեւոր հովիւը տարին երկու անգամ կու գայ, որպէսզի եկեղեցական արարողութիւն կատարէ:

Սաթոն լաւ կը գիտակցի, որ հայապահպանումը դժուար առաքելութիւն է ներկայ ժամանակներուն: Չունին նոյնիսկ շաքաթօրեայ վարժարան, ուր հայերէն կրնան սովորեցնել նոր սերունդին: Կը մնայ հայրենիքի գործօնը: «Հայաստանի հետ մեր յարաբերութիւնները շատ լաւ կը պահենք, քանի այդ մէկը կարեւոր է հայապահպանումի

գործօնին համար», ըսաւ ան:

Կրցայ տեսնել, որ Սաթոն մէկ-մէկ սկսաւ դուրս բերել իր ապրած տարբեր տրամադրութիւնները: Ան շատ լաւ կրցած էր տեսնել, թէ ինչ կը նշանակէ սփիւռք եւ անոր մէջ ապրելու իրավիճակ: Կրցած էր նաեւ տեսնել, որ իր ապրած կեանքը այս ներկայ հողին վրայ «օտար» է, երեւի «ամալի», որ չի լեցնել իր հայտն հոգին...

«Եկած ենք՝ ուրիշին երկիրը կը շինենք», ըսաւ Սաթոն:

Սաթոյին հետ մեր խօսակցութիւնը պէտք էր ամփոփէինք՝ անկախ այն երեւոյթէն, որ երկու հայերու հանդիպումը եւ խօսակցութիւնը հաճելի է եւ կրնայ երկարաշունչ ալ ըլլալ: Բաժնուելէ առաջ ան ըրաւ իր հաստատումը. «Մտադրութիւն ունիմ Հայաստան վերադառնալ: Ամէն մարդ իր հողին վրայ պէտք է ապրի»:

Հողը եւ անոր վրայ ապրելու գրաւականը: Հողը, որ հարազատ է, օտար չէ, ոչ ալ՝ ամալի □

Սեմը, էվան, Ալեքսը ու տակաւին... Բոլորն ալ կ'ապրին իրենց հողին ջերմութիւնը, նոյնիսկ երբ անոնք կ'ապրին անկէ հեռու՝ տարբեր պատճառներով եւ պարտադրանքներով:

Սաթոյի կեանքի փորձն ալ այդ է: Սաթոն ալ կ'ապրի հողին հարազատութիւնը, քանի կ'ապրի անկէ հեռու:

Բայց Սաթոյին համար կայ գիտակցութիւնը եւ գգաստութիւնը, թէ՛ «մարդ իր հողին վրայ պէտք է ապրի»: Հոն, ուր մարդը կ'ապրի իր ինքնութեան, հարազատութեան եւ ջերմութեան մէջ:

Բայց հողին վրայ ապրելու համար անհրաժեշտ է նոյն հողին «ապահովութիւնը»՝ իր ընդհանրական հասկացողութեան մէջ: Եթէ քաղաքական, բայց նաեւ՝ ընկերային, տնտեսական, մշակութային ու, տակաւին, կրօնական ու մարդ-


«Յովհաննէս Թումանեան. Մարդը եւ Բանաստեղծը» (Յեղիմակ՝ Վարդգէս Ահարոնեան)

ԱԻԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ

Ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեան իր երկրային կեանքին մեծ մասը ապրած եւ ստեղծագործած է Թիֆլիսի մէջ: Այդ ժամանակաշրջանին, Անդրկովկասի գլխաւոր քաղաքին մէջ հաւաքուած էին օրուան արեւելահայ մտաւորական ընտրանին, հանրածանօթ գործիչներ, գինուորականներ եւ արուեստագէտներ: Թիֆլիսը կ'եռար հայ կեանքով՝ իր բազմաբնոյթ ձեւերով, մամուլով, հասարակական տարաբնոյթ կազմակերպութիւններով եւ օտարերկրացի այցելուներով:

Անտարակոյս, Թիֆլիսահայ կեանքի առանցքային դէմքերէն էր Յ. Թումանեան, որ իր ինքնատիպ կենցաղով, իւրատիպ նկարագիրով, հասարակական կապերով եւ մշակած գրականութեամբ իւրաքանչէր հմայք մը ստեղծած էր իր շուրջը, որմով կը հետաքրքրուէին ոչ միայն աշակերտներ եւ գրասէրներ, հայկական շրջանակներ ու տարբեր խաւեր, այլեւ՝ օտարագրիներ եւս: Հոն կը գտնուէր նաեւ գրող եւ հասարակական գործիչ Աւետիս Ահարոնեան, որ կլանուած էր ազգային-քաղաքական բուռն գործունէութեամբ: Բնականաբար, ակնկալելի էր որ երկու անուանի դէմքերը ունենային մարդկային, գրական եւ հասարակական յարաբերութիւններ, ունենային գրոյցներ եւ միտքերու փոխանակութիւններ: Երկուքն ալ ունէին ընտանիք: Հետեւաբար, անհատական կապերէն անդին ստեղծուած էին նաեւ ընտանեկան յարաբերութիւններ, մանաւանդ իրենց որդիներուն միջեւ:

Ա. Ահարոնեանի որդին՝ Վարդգէսը, գրող էր, հասարակական գործիչ եւ իրաւաբան: Հայաստանի առաջին հանրապետութեան շրջանին վարած է հանրապետութեան դատախազի պաշտօնը: Ապրած է ԱՄՆ եւ հոն աշխատակցած «Հայրենիք» ամսագրին գրական, յուշագրական եւ գրադատական յօդուածաշարերով: Հրատարակած է Յ. Թումանեանի (1936), Բաֆֆիի (1936) եւ Զօր. Անդրանիկի (1957) մասին հատորներ:



Մեծ հայ եւ գրող Յ. Թումանեանի ծննդեան 150-ամեակին առիթով, Համագրային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը, օրինակելի նախաձեռնութեամբ մը, ընթերցողներուն տրամադրութեան յանձնեց Վ. Ահարոնեանի քիչ-ծանօթ «Յովհաննէս Թումանեան. Մարդը եւ Բանաստեղծը» գիրքը, որ նախապէս լոյս տեսած էր Պոսթըն, նախ որպէս յօդուածաշարք եւ ապա որպէս առանձին գիրք:

2019-ին Երեւան հրատարակուած նորատիպին սկիզբին հրատարակիչները գրած են. «Վարդգէս Ահարոնեանի լեզուն անպաճոյճ է, սահուն ու գրաւիչ, ինչը ստիպում է ընթերցողին գիրքը բացելուց յետոյ կլանուած հետեւել ասելիքին՝ մինչեւ վերջին էջը»։ Ինչ որ ճիշդ է: Հեղինակը գործը նուիրած է իր հօրը՝ Ա. Ահարոնեանին: Ան իր Երկու Խօսքին մէջ, 1935-ին Նիւ Եորք գրուած, կ'ընդգծէ. «Յովհ. Թումանեանի չոր, անշունչ կենսագրութիւնը չէ այս գիրքը, այլ կենդանի, թրթռուն պատմութիւնը մի գունագեղ կեանքի, որ լի է եղել լոյսով, բոյրով, խիղճով, վշտով եւ հմայիչ խօսք ու տաղով»:

320 էջանի փոքրաչափ գիրքը, լուսանկարներով ճոխացած, բաժնուած է երկու մասի՝ Մարդը (էջ 13-180) եւ Բանաստեղծը (էջ 183-311). ունի նաեւ բառարանի եւ ծանօթագրութեան փոքր բաժին մը:

Նշենք, որ հատորը գրականագիտական ուսումնասիրութիւն մը չէ եւ ոչ ալ կը յաւակնի վերլուծական մենագրութիւն մը ըլլալու: Հեղինակն է բացատրողը՝ «Այս գիրքը գրելու համար հեղինակը ունեցել է միայն մէկ արժանահաւատ աղբիւր՝ սեփական յիշողութիւնը»:

Առաջին մասը կը բաղկանայ 23 ոչ-ծաւալուն գլուխներէ: Կը սկսի Թումանեանի ծննդավայր չքնաղ Լոռիով, ընտանեկան կեանքով ու նախակրթութեամբ՝ փուլ առ փուլ վրձինելով անոր գիմագծութեան իւրաքանչէր երանգները՝ հասնելու համար անոր մահուան՝ 54 տարեկան հասակին (23 Մարտ 1923):

Գիրքին առաւելութիւնը այն է, որ հեղինակը Թումանեան մարդուն ամբողջական կերպարը ներկայացուցած է հարազատօրէն, անմիջական տպաւորութեան տակ: Կը նշէ որ ան «բանաստեղծում էր ոչ միայն գրչով, այլ եւ աւօրեայ կեանքի մէջ իր ամէն մէկ շարժումով: Իր հագուստից սկսած մինչեւ իր աշխատանոցի վառարան վառելիքը, բանաստեղծութիւն էր Թումանեանի համար» (էջ 62): Հապաբնակարանը՝ «տունը մի փոքրիկ թանգարան եւ մի հարուստ մատենադարան էր» (էջ 46): Ինչպիսի՞ք բնակարան կը նախընտրէր վարձել ան, կ'ի մանաւոր գիրքին ամենաբարձր չարկը պէտք է ըլլար, ընդարձակ, բազմասենեակ, Թիֆլիսի կից լեռներուն շատ մօտ՝ որպէսզի նմանի Լոռիին՝ քանզի ան միշտ կ'ապրէր ծննդա վայրին կարօտով: Հեղինակը կ'անդրադառնայ «ամենայն հայոց թամատա» եւ «ամենայն հայոց բանաստեղծ» կոչումներուն ստեղծման պարագաներուն, իրեն մօտիկ գրական շրջանակին, հաստատելով՝ որ փոխադարձօրէն Ղազարոս Աղայեանն ու Յ. Թումանեանը սերտօրէն կապուած էին իրարու: Իր յարկին տակ յաճախ կ'այցելէին Աւետիք Իսահակեան, Լ. Շանթ, Դ. Դեմիրճեան, Ն. Աղբալեան, Լէօ, Պ. Պոօչեան, Վ. Տէրեան, Ա. Շիրվանզադէ, Վրթապետ Գաբրիելեան եւ ուրիշներ: Ինչպիսի հետաքրքրական դրուագներ պատահած են 10 զաւակներուն հետ՝ երբ յաճախ կը շփոթէր գանոնք, իր ներընտանեկան կեանքին ներս՝ իր յատուկ կենցաղով: Օր մը, առաւօտեան, իր տիկինը՝ Օլիան, լուացքի համար Չուր կը խաշէր, ինքն ալ խանդավառ իր ընկերներ-

ըր խաշի կը հրաւիրէ եւ ինչ զաւեշտալի-հիասթափութիւն...: Անմիջականօրէն իր անուան հետ են կապուած «Վերնատուն» գրական խմբակը, Կովկասահայ գրական, մշակութային եւ հայրենակցական բազմաթիւ միութիւններու նախագահութիւնները, Սայաթ Նովայի թիֆլիսեան չիշատակումները (ցարդ շարունակուող): Կը կարդանք «Շունն ու Կատուն» ին արագօրէն ժողովրդականացման փաստը, «Մի Կաթիլ Մեղր» ին քաղաքական ենթախորքը, «Հասկեր» մանկապատանեկան հանդէսին իր բեղուն աշխատակցութիւնը, «Լուսաբեր» դասագիրքերուն պատրաստութիւնը եւ այլն: Ան սիրահար էր իւրաքանչէր ու հնաոճ իրերու եւ ունէր եզակի գիրքեր, նոյնիսկ կրկնօրինակներով, եւ երբ Թիֆլիսի մօտ պարսիկ հիւպատոսը կը խօսի Ֆիրտուսի մասին եւ կը խոստանայ բերել անոր գիրքը Պարսկաստանէն, ան իր ու նեցած օրինակներէն մին կը հանէ եւ կը նուիրէ հիւպատոսին՝ զարմացնելով օտարագրի դիւանագէտը: Իր նախասիրած համաշխարհային գրողները եղած են Պուշկին, Լերմոնտով, Շէքսպիր, Հայնէ: Դիպուկ է իր հանդիպումը մեծահարուստ Մանթաշեանի հետ, եւ երբ ան հարց կու տայ թէ ինչո՞վ կը գրադիս, Թումանեան՝ գիրք շինելով, ան կ'ըսէ «ուրեմն պարապ ես եղել»: Ի հարկէ, ծանր եղաւ կորուստը իր Արտիկ (Արտաւազդ) արժէքաւոր որդիին՝ 1918-ի վասպուրականի նահանջի ժամանակ հերոսական նահատակութեամբ: Նաեւ իր եղբոր սպանութիւնը: Հայկական կոտորածները, հազարներու գաղթն ու սովամահ հայրենակիցները, անհամար որբերն ու ազգային քաղաքական յաջորդական յուսախաբութիւնները կը կրեն շէն ու լաւատես Թումանեանը: Ապա՝ ՀՕԿ-ի նախագահ, անբուժելի հիւանդութիւն, տառապանք ու անժամանակ հրաժեշտ կեանքին:

Երկրորդ մասով կը ծանօթանանք Թումանեանի գրականութեան առանձնապատկութիւններուն, անոր բնորոշ գիծերուն եւ մշակած հիմնական նիւթերուն: Ան խորապէս մարդկայնական բանաստեղծ է: 6 գլուխներէ բաղկացած բաժինը լուսարձակի տակ կը բերէ Անուշը, Գիքորը, Սասունցի Դաւիթը, Թմկաբերդի Առումը, Հին Կուրը,

Շար.ը էջ 18

INNOVATIVE
 Designs & Manufacturing, Inc.
 idmifurnishings.com

Գուրգուրանք Լեզուին եւ Մշակոյթին



Ռ. ԿՈՐԻԻՆ

Տօները ոգեշունչ առիթ են հանդիսանում, նրանցից մէկն է Սրբոց Թարգմանչաց տօնը, ինչպէս նաեւ ընդունուած է կոչել՝ Հայոց Մշակոյթի Տօն-Հոկտեմբեր ամսուսը:

Հոկտեմբերը աշնան ամիս է համարուում, դեղնաթոշր ու կարմրաթոշր ծառատերեւներով, շատերի համար գեղեցիկ ներշնչող գոյներ ու տեսողաշտ, իսկ ուրիշների համար թախիծ ու մեկամաղձոտութիւն խորհրդանշող, ամենայնդէպս հոկտեմբերը ուշագրաւ ամիս է:

Արդարեւ մեր Թեհրանում եղած ժամանակ Հոկտեմբերը ուրիշ համ ու հոտ ունէր: Ճոխ հանդիսութիւն էր կազմակերպուում Առաջնորդարանի կողմից թէ լուսահոգի Արտակ սրբազանի օրօք եւ ներկայ թեմակալ Սեպուհ սրբազանի ժամանակ: Հրակիրուում էին ուսուցիչներ, գրողներ, ծնողական խորհուրդներ, մտաւորականներ, ազգային-հասարակական գործիչներ, միով բանիւ՝ թեհրանահայ սերունցքը, «Արարատ» մարզաւանի մեծ դահլիճը բազմամարդ շունչ ու ոգի էր առնում: Գնահատուում եւ պարգևադրուում էին հանգստի կոչուած ուսուցիչները, արտասանուում էին տօնը բնութագրող խօսքեր, տեղի էր ունենում բարձր գեղարուեստական ծրագիր, վերջում՝ համադամ կերակուրներով հիւրասիրութիւն, առանձին օրեր գրքերի ցուցահանդէս, որը Սեպուհ սրբազանը հիմք դրեց 2000 թուականին շարունակուելով ամէն տարի: Այսպէս Հոկտեմբերը իրանահայ կեանքում դառնում է նախշուն ծառ՝ նուան ծաղիկներով զարդարուած: Սակայն մեր մօտ Լոս Անջելէսում չի նկատուում այդ աշխուժութիւնը, մեծամասնութեամբ ընտանիքներ չեն իմանում ինչ է Հոկտեմբեր ամիսը եւ մեր գեղածիծաղ լեզուն թողած ուրիշ լեզուով են բարբառում, անգիտանալով մայրական լեզուով խօսելն է հաճելի ու քաղցր:

Չեմ հասկանում մեր վարչապետը ՄԱԿ-ում մեր լեզուն թողած ինչո՞ւ օտար լեզուով արտայայտուեց, չեմ կարծում պատուէր եղած լինէր, քանի որ իրանը եւ ուրիշներ իրենց պետական լեզուով արտայայտուեցին:

Հոկտեմբերը մեր եռամեծար վարդապետների յիշատակման, մեզ յաւերժացնող տառերի եւ դպրութեան տօնն է: Հոկտեմբերը մեր հայ մշակոյթի ծառը զարդարող երախտաշատ գրողների, կրթական գործիչների եւ մշակների տօնն է:

Հոկտեմբերը մշակոյթի զանգերը հնչեցնելու, խնկի եւ աղօթքի, գովասանքի ու գնահատանքի տօնն է:

Մեր աղօթքն է բարձրանում առ Աստուծո՞ւմ մեր արարիչ, թարգմանիչ ու կազմակերպիչ վարդապետների հոգու հաճութեան համար: Այր մի Մեսրոպ Մաշտոց, հովուապետ եւ կաթողիկոս Սահակ Պարթեւ, Վառձապուհ Արշակունի Արքայ եւ Թարգմանիչ վարդապետներ, որոնք իրենց աստիճանական դիրքով ու կարգով կառուցեցին հայոց մշակոյթի բերդը:

Ինչո՞ւ այս փառապանծ յիշատակումը, պատճառը արեւի պէս յատակ է, եթէ այդ տառերը Ս. Մեսրոպ Մաշտոցի միջոցաւ չյառնէին, Աստուծաշնչեան «Թագուհի թարգմանութիւնը» չկատարուէր եւ ինքնուրոյն մշակոյթի հիմքը չդրուէր «Ոսկեդարեան» վիթխարի աշխատանքներով, վաղուց հայն ու Հայաստանը պատմութեան էջերում պիտի որոնէինք:

Հինգերորդ դարի մշակութային ձեռք բերումները մեր գոյութեան խարիսխը խորապէս ամրապնդեցին յորձանուտների եւ կործանիչ հողմերի դէմ-յանդիման: Որեւէ մի գործ ինքնաբերաբար չի լինում, անձնուրացներն ու ինքնամոռացներն են, որ իրենց սիրանքներով ու գոհողութիւններով ազգի փրկութեան եւ յաւերժութեան ճամբան գծում եւ ճակատագիր են տնօրինում, ինչպէս մեր օրեայ Արցախի ազատագրման մարտիկները արեցին:

Դարեր եկան ու անցան, մեր ժողովուրդն ու երկիրը շատ արհաւիրքներ տեսաւ, թիրախ դարձաւ հայութեան գոյութիւնը կոտորածներով, նախճիրներով եւ տեղահանութիւններով, սա-կայն թշնամիների այդ բոլոր անմարդկային արարքները՝ հալածանքներն եւ կոտորածները ի զօրու չեղան մեզ արմատախիլ անել, քանզի 5-րդ դարի կեանքի փիլիսոփայական ուսմունքն ու դրուածքը խորախորհուրդ արեան գոյն էր ստացել, ոգի եւ շունչ էր դարձել, հայը նիւթականից վեր էր դասել հոգեկան եւ բարոյական արժէքները, որին մինչեւ օրս էլ մնացել է հաւատարիմ եւ որի հետեւանքով ու հասկացողութեամբ մնաց յաւերժի երթով, իսկ բազում թշնամիներ եկան ու անցան հողմերի պէս, անշուշտ դեռ կան այդ թշնամիներից, որոնք եաթաղանի ուժով եւ խափկանքով են գոյատեւել այլոց հողերի վրայ կառուցելով իրենց որջը:

Յակոբ Պարոնեանի Արձանը՝ Շիշլիի Գերեզմանատան Մէջ



Շիշլիի ազգային գերեզմանատան մէջ, շաբաթավերջին, Պատրիարքական տեղապահ Տ. Սահակ Եպսկ. Մաշալեանի նախագահութեամբ, յայտնի երգիծաբան Յակոբ Պարոնեանի արձանի բացման արարողութիւնը տեղի ունեցաւ, առիթ դառնալով մեծ խանդավարութեան: Արձանը ձեռակերտն է յայտնի քանդակագործ Էրօլ Սարաֆեանի:

Մշակութային այս ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերին Տ. Յարութիւն Աբեղայ Տամատեան, Հայր Աբրահամ Վրդ. Ֆրատեան, Տ. Գրիգոր Ա. Քհնյ. Տամատեան, Տ. Պարթեւ Քհնյ. Գարագաշեան, Տ. Շիրվան Քհնյ. Միւրզեան, Պէյօղլուի Ս. Եկեղեցեաց թաղային խորհուրդէն եւ գերեզմանատան յանձնախումբէն ներկայացուցիչներ, Թրքահայ ուսուցչաց հիմնարկի վարչութեան ատենապետ Սարգիս Քիւլիկէչ եւ իր գործակից ընկերները, Կեդրոնական վարժարանի տնօրէնուհի Սիլվա Գուլուծեանի գլխաւորութեամբ՝ կրթական մշակներ ու աշակերտներ, ինչպէս նաեւ մշակութասէր հասարակութիւնը:

Բացման արարողութիւնը սկիզբ առաւ հոգեհանգստեան արարողութեամբ: Տեղապահ սրբազան հօր գլխաւորած թափօրը, մոտաքէն ուղղուեցաւ դէպի գերեզմանատան հրապարակը, ուր կը գտնուէր Յակոբ Պարոնեանի նորակերտ արձանը: Այնուհետեւ, կատարուած հանգստեան արարողութեան աւարտին վերցուցաւ արձանի քօղը եւ ներկաներ տեսան հսկայ արձանը: Արձանի առջեւ կը գտնուէր նաեւ մարմար մը, որուն վրայ քանդակուած էր Տ. Քթ. Իգնատիոս Սարգսյանի, Պարոնեանի ձօնած յիշատակի գրութիւնը:

Հոգեւոր արարողութեան աւարտին, Կեդրոնական վարժարանի պատրաստած կոկիկ յայտագիրը գործադրուեցաւ: Վարժարանի ուսուցիչներէն Տիւնա Պուլտուք ողջունեց ներկաները եւ հրաւիրեց աշակերտները, որպէսզի ներկայացնեն Յակոբ Պարոնեանի կենսագրութիւնն ու խօսքերը:

Ապա, իր խօսքը ուղղեց յայտնի արուեստագէտ Պօղոս Չալիքճրօղլու եւ ներկայացուց Պարոնեանի երգիծական ոճը ու հանդէս եկաւ «Քաղաքավարութեան վնասները» գործէն հատուածով մը: Ներկաներ գուարճանալով հետեւեցան սոյն բաժնին: Իր սրտի խօսքը արտասանեց նաեւ արձանի բարերար Սարգիս Քիւլիկէչ, որ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն ու մաղթեց, որ Յակոբ Պարոնեանի յիշատակը միշտ վառ մնայ մեր ժողովուրդին մէջ:

Հանդիսութեան հուսկ բանքը արտասանեց ու ներկաներուն իր պատգամը փորձեց տեղապահ սրբազան հայրը: Այս առթիւ ան յիշեցուց, թէ նման անձերը ժողովուրդով իմաստ շահած են: Սրբազան հայրը ի միջի այլոց ըսաւ. «Պարոնեան, հայոց գրականութեան թափ ստացած Չարթօնքի շրջանի գրողներէն է եւ ապրումներն ու տեսածները ներշնչած են զինք: Իր գլխաւոր գործը եղած է. դիտել, քննել եւ ուղղել: Ան լաւ գնահատած է, իսկ տեսած թերութիւնները երգիծանքը օգտագործելով քննադատած է: Ընդհանրապէս իր շրջանի մարդիկը շատ ալ չեն հանդուրժած նման ոճի մը, բայց իր յաջողները մեծ հիացումով ու գուարճանալով ընթերցած են իր գործերը: Մենք մեր արժէքները, միշտ մեր աչքերուն առջեւ պէտք է ունենանք, որպէսզի չմոռնանք զանոնք: Այսուհետեւ, Պարոնեանի արձանը տեւաբար պիտի յիշենք իր ներկայութիւնը եւ այցելուներ այստեղ պիտի յիշեն Պարոնեանի երգիծանքը»:

Սրբազան հայրը իր խօսքը ուղղելով աշակերտներուն՝ թելադրեց կարգալ Պարոնեանի երկերը եւ խնդալով սորվիլ իրենց մշակոյթը: Այս առթիւ շնորհաւորեց զանոնք, ինչպէս նաեւ գնահատեց բարերար Սարգիս Քիւլիկէչը եւ Էրօլ Սարաֆեանը:

Հանդիսութեան աւարտին ներկաներուն բաժնուեցաւ հրուշակ, որուն վրայ գետեղուած էին Պարոնեանի նկարն ու խօսքերէն ոմանք:



Ջօրացիկ օժանդակներ Փրկենք
www.syrianarmenianreliefund.org

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948



Դասախօսութեան Այլ Լուսարձակին Տակ

Շարունակուած էջ 6-էն

Այնպէս կը թուի թէ Պաղեստինեան հարցի լուծուած իսրայէլեան ռազմավարական սանդղամատին վրայ կորսնցուցած է իր առաջնահերթութիւնը: «Նախանահաճ երազ մը կը հետապնդէ» ըսաւ զօրավարը «բայց ատիկա երազ մըն է լոկ: Երբ մէկը երազէն արթննայ ստիպուած պիտի ըլլայ իրականութեան հետ հաշտ քայլ մը եւ դիրքորոշում մը որդեգրելու» եզրակացուց ան:

Ի՞նչ է այդ երազը որ այժմ իսրայէլի հրէայ բնակչութեան մեծամասնութեան երազը կը համարուի:

Վարչապետ Նախանահաճի իսրայէլը, այլեւս չի հաւատար «երկու ազգ, երկու պետականութիւն» լուծումին ու կը ջանայ Պաղեստինեան հողամասերու վրայ հրէայ գաղթականներու տարածումով նորանոր հողամասեր իր հակակշռին ենթարկելու եւ այս ձեւով զանոնք ներգրաւելու իսրայէլի սահմաններէն ներս: Ներկայիս մօտաւորապէս 500,000 անձեր կ'ապրին այդ գաղթականներէն ներս որոնք վերջին տասնամեակներուն սունկի նման տարածուեցան Պաղեստինեան նկատուող հողամասերուն վրայ: Միաժամանակ, իսրայէլ կը ջանայ Պաղեստինեան իշխանութեան իրաւասութիւնները սահմանափակել ներքին ինքնավարութեան խաբէկանքով, զինագրծել այդ իշխանութիւնը ու նաեւ վերջնականապէս փակել «սոււղարձի» կարելիութիւնը այն միլիոնաւոր Պաղեստինցիներուն, որոնք զանազան արաբական երկիրներու մէջ հաստատուած գաղթականներու մէջ կ'ապրին 1948 թուականէն ի վեր:

Այնպէս կը թուի թէ այս ծրագիրը կը վայելէ Ամերիկայի այժմու նախագահ Տանըլտ Թրամփի վարչաձեւին աջակցութիւնը: Երուսաղէմի հարցով անոր իբրեւ իսրայէլի մայրաքաղաք ճանաչումը, Ամերիկեան դեսպանատան հոն փոխադրութիւնը, Պաղեստինեան իշխանութեան տարեկան յատկացումներու դադարեցումը, ինչպէս նաեւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Պատկանող գաղթականներու կրթութեան եւ ուսումի յատկացուած գործակալութեան (UNRWA) դէմ ի գործ դրուած պիւտճեական սեղմումները ցոյց

կու տան թէ ներկայ ամերիկեան վարչաձեւը կը միտի լուծարքի ենթարկել Պաղեստինեան դատը այս ձեւով, եւ միանգամընդմիշտ խաղաղութիւն հաստատել Միջին Արեւելքի մէջ:

Զօր. Եատլինի կարծիքով իսրայէլ պէտք է զգուշանայ նախագահ Թրամփէն, որովհետեւ «անոր ?ընթացքը կանխատեսելի չէ եւ կրնայ ունենալ անսպասելի դիւրեւ մատնելով իսրայէլը»: Զօր.Եատլին լաւատես չէ նաեւ վերջին երկու տարիներուն նախագահ Թրամփի բազմիցս շեփոհարած «Դարաշրջանի Նախաձեռնութիւն» յորջորջուած ծրագրի արդիւնքէն, որովհետեւ ան կրնայ «մեռած աշխարհ գալ», Եատլինի իսկ բնորոշումով:

Վերջին տարիներուն իսրայէլ մեծ ջանք կը թափէ նաեւ շրջանցելու Պաղեստինեան իշխանութիւնը «բնականոն» յարաբերութիւններ մշակելով Արաբական Մոցի կարգ մը երկիրներու հետ: Ինչպէս ծանօթ է արդէն իսրայէլ եւ Արաբական Մոցի երկիրներ գաղտնի հանդիպումներ ունեցան վերջին մի քանի տարիներուն համադրելու իրենց ջանքերը իրանեան վտանգին դէմ: Իսրայէլ այնպէս կը յուսայ թէ Արաբական Մոցի երկիրներու հետ իր հաստատած այս գաղտնի յարաբերութիւնները ժամանակի ընթացքին պիտի ծաղկին եւ պիտի յանգին արաբական երկիրներու հետ խաղաղութեան դաշնագրի մը որ պիտի ծառայէ լուծելու Պաղեստինեան հարցը: Այս հիման վրայ իսրայէլ կը փորձէ միջազգային հանրութիւնը այնպէս համոզել եւ տպաւորել որ Միջին Արեւելքի կենդրոնական հարցը իսրայէլ-Պաղեստինեան հակամարտութիւնը չէ, այլ Արաբական Մոցի երկիրներու հետ իր մշակած յարաբերութիւնները, որ կրնան շրջանին խաղաղութիւն բերել:

Դ- իսրայէլ- Սփիւռք երկփեղկուածութիւնը

Զօր. Եատլին իր խոր մտահոգութիւնը յայտնեց իսրայէլի եւ Հրէական սփիւռքի ներկայ յարաբերութիւններու խորքին եւ զարգացումին նկատմամբ: Մասնաւորապէս «մտահոգիչ» որակեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու հրէական համայնքներու եւ կազմակերպութիւններու բռնած դիրքը:

քը, որ կը հակառակի իսրայէլի ներկայ եւ արտաքին քաղաքական ուղղութիւններուն: Հրէական սփիւռքի համայնքները մտահոգութեամբ կը դիտեն իսրայէլի կրօնամոլ հատուածներու քաղաքական կեանքին մէջ հետզհետէ մեծցող եւ աճող ազդեցութիւնը, որ երկրի ժողովրդավար եւ աշխարհիկ դիմագիծը փոփոխութեան կ'ենթարկէ, էրտ Զօր.Եատլինի: Պարզ դարձած է որ իսրայէլի հրէան չի հասկնար թէ ինչու՞ տարբեր է Ամերիկացի հրէան, թէ ինչու՞ կը համակերպի խառն ամուսնութիւններու, թէ ինչու՞ կը նոյնանայ Ամերիկայի Տէմոքրատիկ կուսակցութեան եւ եւ թէ ինչու՞ ազատամիտ կեցուածքով կը քննադատէ իսրայէլի վարած քաղաքականութիւնը Պաղեստինեան հարցին մէջ: «Իսրայէլի հրէան եւ սփիւռքի հրէան տարբեր ուղղութիւններով կը շարժին» կ'ըսէ Եատլին մէջբերելով Մեծն Բրիտանիոյ Տուրհամ Համալսարանի Քաղաքական Ուսումներու եւ Միջազգային Հարցերու մասնագէտ Իլան Զուրի Պարոնը: «Ազատամիտ հրէան կը հաւատայ իսրայէլի բայց միաժամանակ կը հաւատայ նաեւ մարդկային իրաւունքներու եւ արժանապատուութեան յարգանքին ու կը դատապարտէ իսրայէլի կառավարութեան բիրտ ուժի գործածութիւնն ու ցեղապաշտ եւ մոլեւաւոր բնոյթ ունեցող արտայայտութիւնները եւ միջոցառումները»: Հանրայայտ լրագրող Թոմաս

Ֆրիտման իր կարգին կը գրէ թէ Նախանահաճի «ծայրայեղ աջակողմեան կուսակցութիւններու հետ գործակցութիւնը մեծ նախատինք մը եղաւ Ամերիկա ապրող հրէաներուն համար, եւ այդ պատճառով հրէական սփիւռքի յարաբերութիւնները իսրայէլի հետ վատթարացան ու երկփեղկուածի ենթարկուեցան»:

Զօր. Ամոս Եատլինի ելոյթը «ձէյմա Պէյքըր Բ. Հանրային եւ Հասարակական Գիտութիւններու Հետազոտային Կենդրոն»ին մէջ անգամ մը եւս կու գայ հաստատելու մասնագէտներու այն կարծիքը թէ իսրայէլի ռազմավարական նպատակները եւ առաջնահերթութիւնները հանգուցային վիճակի մէջ կը գտնուին ներկայիս եւ թէ իսրայէլ, հակառակ նախագահ Թրամփի կողմնակից տրամադրութիւններուն, տեղափոխ կ'արձանագրէ իր ծրագիրներուն մէջ, որովհետեւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան անդամ եղող եւ ազդեցիկ երկիրներ կը մերժեն նեցուկ ըլլալ իր միակողմանի նախաձեռնութիւններուն ու կը հակառակին իր մշակած քաղաքականութեան: «Այս պայմաններուն մէջ, իսրայէլ պէտք է տարբեր ուղղութեամբ շարժի եւ համաձայնութեան գայ Պաղեստինցիներու հետ» եզրակացուց զօր. Ամոս Եատլին: «Այլապէս փոքրիկ սխալ մը կրնայ տակնուվրայ ընել Միջին Արեւելքը»:



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepoyan@gmail.com



Legacy Realty

Nick Karasarkisian
Broker - CalBRE # 01022153

2275 Huntington Dr., #117
San Marino, CA 91108
Phone: 213.706.9990
e-mail: nickkarasarkisian@gmail.com
www.legacyrealtyca.com



Յովհաննէս Թումանեան

Շարունակուած էջ 16-էն

Լուսաւորչի Կանթեղը, Փարվանան, Աղաւնու Վանքը, Ախթամարը, Հայրենիքիս Հետը, Քաջ Նազարը եւ այլն՝ անոնց մէջէն ընդգծելով մարդասէր, արդարութեան պաշտպան, հայրենասէր, խոնարհ գիւղացիին թիկունք կանգնած Թումանեանի բարոյական վեհութիւնն ու քաղաքացիական գի տակցութիւնը: Ահարոնեան կը գրէ. «Թումանեանի գրականութիւնը, որի բոլոր նիւթերը առնուած են ժողովրդից, իր բոլոր արձատներով կապուած է կեանքի հետ: Յ. Թումանեանը ողբ չի ամրոցներ չի կառուցում եւ փակուած դրանց մէջ, անապատ չի քաշուած, այլ ապրում եւ ստեղծագործում է կեանքի մէջ եւ կեանքի համար: Իսկ կեանքի մէջ մարդը գերագոյն արժէքն է մեր բանաստեղծի համար» (էջ 296): Լեզուի մասին՝

«Իր լեզուն մեծ չափով ժողովրդի եւ յատկապէս իր հայրենի Լոռիի ժողովրդի խօսած լեզուն է (էջ 301): Իսկ հիանալի իմաստութեամբ զեզուն են անոր քառեակները՝ արեւելեան խոհանարարական սիրութեան հետ մրցակցող:

Եզրակացութիւն՝ «Թումանեանի գրականութիւնը ե՛լ իր նիւթով, ե՛լ իր խորքով, ե՛լ իր ձեւով ազգային է, ամբողջապէս հայկական: Առնելով հայ ժողովրդից ե՛լ նիւթը ե՛լ ձեւը, Յ. Թումանեանը ամենամեծ չափով նպաստեց հայ գրականութիւնը օտար, յաճախ խորթ ազդեցութիւններէն ազատագրելու ճիգերին:

Յ. Թումանեանը փառքով մտել եւ իրաւունքով գրաւել է իր տեղը հայոց գրականութեան պանթէոնի մէջ» (էջ 310): Սոյն վերահրատարակութիւնը կարեւոր մասնիկ մը կը յաւելու թումանեանագիտութեան ճոխ գրացանկին վրայ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ՂԱՍԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ՂԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

(626) 797-7680

ՄԱՐԳԴ



ՍԱՐԳԻՍ ԳԱԼՔԱԳՃԵԱՆ
1938-2019

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ ամուսինին, հօրեղբոր եւ հարազատին ՍԱՐԳԻՍ ԳԱԼՔԱԳՃԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Երկուշաբթի, 7 Հոկտեմբեր 2019ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 10 Հոկտեմբեր 2019ին Պատն Ռուժի Ս. Կարապետ եկեղեցոյ մէջ առաւօտեան ժամը 11:00ին:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Նորա Քէշիշեան-Գալթագճեան
- Քոյրը՝ Անթառամ Գալթագճեան
- Քոյրը՝ Տիրամայր Լուսին ձունտուրեան եւ զաւակները Լիբանան Տէր եւ Տիկ. Պողոս եւ Ազատուհի Մութաֆեան եւ զաւակները Տէր եւ Տիկ Սարգիս եւ ձէնի Քիս

Ոչ եւս է Սարգիս Գալթագճեան

Յաւով կ'իմանանք «Մասիս»ի հաւատաւոր ընթերցողներէն եւ Լուսինային նահանգի Պատն Ռուժ քաղաքի ազգային անձնաւորութիւններէն Սարգիս Գալթագճեանի մահը:

Մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի այրիին Տիկին Նորային եւ համայն Գալթագճեան եւ Մութաֆեան ընտանիքներուն:

«Մասիս»ի խմբագրութիւն

Ես Ու Տղաս՝ Արմէն Անասեանը

Շարունակուած էջ 13-էն

Երեկոն սկսուած է համերգային ծրագրի ընդհանուր անունը կրող Շառլ Ազնաւուրի La Boheme համաշխարհային երգի հնչիւններէ ներքոյ: Երգը ջութակի եւ դաշնամուրի համար մշակել է նոյն ինքը՝ այս անգամ արդէն կոմպոզիտոր Մարկ Ռոբսոնը: Մեղեդու կատարման առաջին իսկ վայրկեանից ունկնդրի համար պարզ է դառնում, որ իր հոգին այդ երեկոյ սաւառնելու է անեղծ, մաքուր ու գուլալ երաժշտութեան թագաւորութիւնում:

Խելամիտ մօտեցումով, նկատի ունենալով միջավայրն ու երեկոյին ներկայ եղող հասարակութեան մակարդակը, Արմէնն ու Մարկը համերգի ծրագիրը կազմել էին դիւրամարս, հասկնալի, մարդու հոգին լուսաւորող փոքրածաւալ գործերով, որոնցից մի մասը իրենք էին մշակել: Կոմիտասեան այս օրերին բաւական թարմ, նորովի, նոր մշակմամբ ու վերաշինող կատարմամբ հնչեցին Կոմպոզիտորի 7 երգերը: Այնուհետեւ՝ Բաբաջանեանն ու էդ. Բաղդասարեանը:

Հայկական երաժշտութեան կողքին, հիմնականում ֆրանսիացի կոմպոզիտորների (Դեբիւսի, Ֆորէ, Մասնէ, Ֆրանկ) փոքրածաւալ գործերն էին:

Իւրաքանչիւր ելուցից առաջ Արմէնը հակիրճ բացատրութիւններ էր տալիս կատարող ստեղծագործութեան մասին՝ էլ աւելի սերտ կապ ստեղծելով ունկնդրի եւ կատարողի միջեւ:

Ուղղակի գիւտի է նման այս երկու տաղանդաւոր արուեստագէտների համատեղ գործակցութիւնը: Անվարան կարելի է ասել, որ մենք գործ ունենք երկու վերտուղ կատարողների հետ՝ յանձինս Արմէն Անասեանի եւ Մարկ Ռոբսոնի: Տառացիօրէն ոչ մի սխալ նոտա, ոչ մի սայթաքում: Մէկ շնչով սկսւած, մէկ շնչով աւարտուած էին ամէն մի կատարում՝ որոտընդոտ ծափահարութիւնների որոտի տակ:

Ես այդ օրը համոզուեցի, որ մենք ունենք դասական երաժշտութեան սիրահարներ, որոնք կարօտ են նման երեկոյների: Ուրեմն՝ առաջ դէպի նոր, նմանօրինակ վայելքներ:

Կարապետ Արքեպիսկոպոս Մազլընեան

Շարունակուած էջ 14-էն

Վերջին օծման եւ յուղարկաւորութեան կարգը կը կատարուէր Աթէնքի մէջ Գահիրէէն յատկապէս ժամանած Մամբրէ Արքեպս. Սիրունեանի նախագահութեամբ՝ իր շուրջ ունենալով ութ քահանայ հայրերը: Ներկայ էին Յունաստա-

նի Սբերիտոն Արքեպիսկոպոսը, հինգ օտար կրօնապետներ, կրօնական նախա-րարութեան ներկայացուցչը, քաղաքական անձինք եւ յարանուանութեանց պետերը: Վախճանեալ Սրբազան Հօր թաղումը կատարուած է Աթէնքի գերեզմանատան Շահինեան ընտանիքի դամբարանին մէջ:

Գուրգուրանք Լեզուին եւ Մշակոյթին

Շարունակուած էջ 17-էն

Հպարտանում ենք մեր անցեալի մշակոյթի տարբեր բնագաւառների ձեռք բերումներով, իրաւունք ունենք, սակայն միայն հպարտանալ ձեռնածալ այս սրբութաց զարգացող ժամանակներում մեզ շատ ազգերից ետ կը պահի, հոգեպէս կը ճնշուենք, կը խեղճանանք օտարների մօտ եւ այլասերումն ու ուժացումը կ'արագացնի մեր սերունդների հայօրէն գոյատեւման:

Հայրենի իշխանաւորները մեծ պարտականութիւն ունեն հայ մշակոյթի պահպանման, զարգացման եւ լեզուի անաղարտութեան՝ օտար բառերից եւ դարձուածքներից խուսափելով, որպէսզի կուէ չգնանք համաշխարհային այս գլոպալիզացիայի քաղաքականութեան կապանքներին: Մեր յոյսը ազգասէր եւ հայրենասէր խոնարհ գործիչներն են, ոչ թէ նախագահներն ու ղեկավարները, որոնց պատճառով այս տարտղնուած, բզկտուած հայրենիք, ցեղասպանութեան ենթարկուած եւ շատ ու շատ կորուստների վիճակում գտնուելով: ՄԱԿ-ի ամբիոն է յատկացուել, կարիք էր ցեղասպանութեան եւ հողերի պահանջա-

տէր լինել, Արցախի եւ ազատագրուած տարածքների հայկականութիւնը բարձրաձայնել եւ շեշտել, ոչ թէ պատկանելիութիւնը ուրիշների համաձայնութիւնը լինի, այդ ուրիշները հայ ժողովրդի կորուստն են ցանկանում եւ վերջ:

Նոյնպէս իւրաքանչիւր հայ ընտանիք պէտք է նախանձախնդիր լինի մեր արժէքներին ի մասնաւորի մեր լեզուի եւ աւանդութիւնների նկատմամբ: Մշակոյթը եւ հայրենիքը խաղալիք չեն, նրանց հետ պէտք է զգուշ վարուել, նրանք մեր պայքերի նիւթական եւ հոգեկան ժառանգութիւններն են, մեր յաւէտ ապրելու առհաւատչեան:

Ահա այս մտածումներով ու մտորումներով ընդառաջ գնանք Հոկտեմբեր ամսուան, երախտագիտութեամբ ոգեկոչենք յիշատակն այն աստղաբոյլ արարիչների եւ բոլոր այն երախտաւորների, որոնք ի սկզբանէ մինչեւ մեր օրերը պահել ու պահպանում են գանձը հայոց եւ իրենց արուեստի ստեղծագործութիւններով ճոխացրել ու հարստացնում են մեր մշակոյթի գանձարանը:

Փառք ու պատիւ նրանց: Շնորհաւոր մշակոյթի տօնը:

Ամերիկեան Բժշկական Առաքելութիւնը

Շարունակուած էջ 8-էն

ուած բուժհաստատութիւններում Հիմնադրամն իրականացնում է մշտադիտարկում եւ գնահատում: Ըստ ամերիկացի մասնագէտների՝ տարեցտարի խնամքի որակը եւ բժշկական ընթացակարգերը բարելաւուած են:

«Հայաստան» համահայկա-

կան հիմնադրամի առաքելութիւնը համահայկական ցանցային համակարգի ձեւաւորումն է, որի նպատակը Հայաստանի, Արցախի, ինչպէս նաեւ աշխարհասփիւռ հայկական համայնքների համաչափ, կայուն եւ փոխկապակցուած զարգացման ապահովումն է՝ հիմնուելով ընդհանուր ինքնութեան վրայ:

«Մարդ Իր Հողին Վրայ Պէտք է Ապրի»

Շարունակուած էջ 15-էն

կային ապահովութիւն: Այս ալ ներկայ աշխարհին մէկ մեծ մտահոգութիւնը եւ իրագործելի մարտահրաւէրն է: Հողին ապահովութիւնը: Հոն, ուր մարդը պիտի ապրի իր կեանքը՝ իր հարազատութեան մէջէն: Ապահովութիւնը խաբրիսին է կեանքեր կերտելու:

Բայց մինչեւ այդ կայ ու կը մնայ Սաթոյին գիտակցութիւնը, որ՝ «մարդ իր հողին վրայ պէտք

է ապրի»: Այս ալ հայուն ապրելու եւ գոյատեւելու գրաւականն է: Հողին, երկրին՝ Հայաստանի մէջ ու անոր համար ապրելու իրականութիւնը: Հոն, ուր հայը պարտի կերտել «ապահով» հող, որպէսզի կեանքեր շինուին: Հայկական կեանքեր:

«Մարդ իր հողին վրայ պէտք է ապրի»: Սաթոյին գաղափարութիւնը, եւ՝ իւրաքանչիւր հայու...

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name:-----
Address:-----
City:----- State:----- Zip Code:-----
Country:-----
Tel:----- Email:-----

ՄԱՐԶԱԿԱՆ

Ադամեանի Գնահատականն Ու Վիճակագրությունը «Բաւարիա»ի Դէմ Խաղում



Բունդեսլիգայի 7-րդ տուրում Սարգիս Ադամեանի «Հոֆենհայմ»-ը հիւրընկալուելիս 2:1 հաշուով էր յաղթեց «Բաւարիա»-ին:

Հայաստանի ընտրանու յարձակուողը, ով մեկնարկային ընթացքից էր խաղադաշտ դուրս եկել, խփեց իր թիմի երկու կոլերը՝ դուրս գրանցելով իր անուան դիմաց:

26-ամեայ խաղացողը փոխարինուեց 81-րդ ընթացքին:

Whoscored.com հեղինակաւոր պորտալը Ադամեանի խաղը գնահատել է 8.15 միաւոր: Հանդիպման ընթացքում հայ վիճակագրը 3 հարուած է կատարել դէպի դարպասը, որոնցից 2-ը ընթացել են դարպասի ուղղութեամբ, իսկ փոխանցումները ճշգրտութիւնը կազմել է 77,3%:

ԱՊԼ. «Լիւերպոլ» - «Լեսթեր»՝ 2:1

40-րդ ընթացքին մերսիսայլցիներին առաջ մղեց Սադիո Մանեն: 80-րդ ընթացքին պատասխան գնդակը հեղինակեց Ջեյմս Մեդիսոնը:

Թուով էր տանտերեն առաջին միաւորները կը կորցնեն ԱՊԼ-ի ընթացիկ մրցաշրջանում, սակայն խաղի վերջին վայրկեաններին 11-մեթրանոցը յստակ իրացրեց Ջեյմս Միլներն ու յաղթանակ պարգեւեց իր թիմին:

Այս պահի դրութեամբ մերսիսայլցիները 24 միաւորով գլխաւորում են մրցաշարային աղիւսակը, «աղուէսներ»-ն ունեն 14 միաւոր ու 3-րդն են:

«Վուլվերհեմփթոնը» Յաղթեց Անպարտելի «Մանչեսթեր Սիթիին»

Անգլիայի ֆուտպոլի առաջնութեան 8-րդ տուրում գրանցուեց ամենախոշոր անակնկալը: Մրցաշարի ետնապահներից մէկը՝ «Վուլվերհեմփթոնը», որը եւրոպայի լիգային որակաւորման փուլում պարգայէս Չախշախեց Երեւանի «Փիւնիկին» (4:0, 4:0), հիւրընկալուելիս 2:0 հաշուով յաղթել է սեփական դաշտում անպարտելի համբաւ ձեռք բերած «Մանչեսթեր Սիթիին»:

«Քաղաքացիները» մինչ այդ այս տարի իրենց յարկի տակ ընդհանուր առմամբ անցկացրել էին 21 հանդիպում, որոնցից 20-ում յաղթանակ էին տարել, եւ միայն մէկն ոչ-ոքի աւարտել («Տոտենհեմի» հետ՝ 2:2): Ինչ վերաբերում է սեփական դաշտում կոլ չխփելուն, ապա Պեպ Գուարդիոլայի սաները վերջին անգամ երկրպագուներին չէին ուրախացնել անցած տարուայ Մայիսի 6-ին, երբ կկոլոլազուրկ ոչ-ոքի էին խաղացել «Հադերսֆիլդի» հետ:

Ուշագրաւն այն է, որ «Մանչեսթեր Սիթիին» այս խաղում կատարել է 18 հարուած, սակայն դրանցից միայն 2-ն են դարպասի ուղղութեամբ եղել: Իսկ ահա «Վուլվերհեմփթոնի» երկու դիպուկ հարուածները հասել են նպատակին, իսկ մնացած 5-ը շեղ են ստացուել:

Լա լիգա. «Ռեալ Մադրիդ» - «Գրանադա»՝ 4-2

Սպանական Պրիմերայի 8-րդ տուրում Մադրիդի «Ռեալ»-ը «Սանտիագո Բերնաբեու»-ում հիւրընկալել էր «Գրանադա»-ին:

Հանդիպման հաշիւը 2-րդ ընթացքին բացեց Կարիմ Բենզեման: Առաջին խաղակէսի վերջնամասում «սերուցքայիներ»-ի առաւելութիւնը կրկնապատկեց իդեն Ազարը: 61-րդ ընթացքին հաշիւը խոշոր դարձրեց Լուկա Մոդրիչը:

Երբ թուով էր՝ «արքայական» ակումբը հեշտ յաղթանակ կը տօնի, հիւրերը 2 անգամ կրճատեցին տարբերութիւնը. նախ 69-րդ ընթացքին 11-մեթրանոցը յստակ իրացրեց Մաչիսը, իսկ 8 ընթացքին մէկ կոլ էլ հեղինակեց Դուարտեն:

Այնուամենայնիւ, «Գրանադա»-ն աւելին անել չկարողացաւ: Խաղավերջում մէկ գնդակ էլ խփեց տանտէրերի կիսապաշտպան Խամես Ռոզիթիգսը:

Այս պահի դրութեամբ «Ռեալ»-ը 18 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը, «Գրանադա»-ն ունի 14 միաւոր ու 2-րդն է:

«Բարսելոնան» Ոչ Մի Հնարաւորութիւն Չտուեց «Սելիլիային»՝ 4:0

Սպանիայի առաջնութեան 8-րդ տուրում Ախոյեան «Բարսելոնան» տանը մրցեց «Սելիլիայի» հետ:

Սպանացի էլենեստօ վալվերդի գլխաւորած թիմն առաւելութեան

«Արարատ-Արմենիան» Յաղթեց «Ալաշկերտին» Եւ Բարձրացաւ 2-րդ Հորիզոնական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՒՍԲ
ՄՐՆԱՇԱՐՄԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿ
ՏՈՒՐ 10

Թիմեր	Խ	Հ	Ո	Պ	ԽԳ	ԲԳ	Մ
1 Արարատ	10	7	1	2	17	7	22
2 Շիրակ	10	5	4	1	14	8	19
3 Արարատ-Արմենիա	8	6	1	1	14	6	19
4 Ալաշկերտ	9	5	1	3	17	10	16
5 Լորի ՖԱ	9	4	3	2	11	12	15
6 Նոա	10	4	2	4	11	9	14
7 Փյունիկ	10	4	1	5	18	20	13
8 Ուրարտու	10	2	3	5	9	16	9
9 Գանձասար-Վապան	10	1	4	5	8	13	7
10 ՖԱ Երևան	10	0	0	10	5	23	0

Ֆուտպոլի Հայաստանի բարձրագոյն խմբի առաջնութեան 10-րդ տուրում կայացան հերթական երկու հանդիպումները:

Կեդրոնական խաղում «Արարատ-Արմենիան» սեփական դաշտում 2:0 հաշուով յաղթեց «Ալաշկերտին»: Գործող ախոյեանի կազմում կոլերը խփեցին Պետրոս Աւետիսեանն ու Մախլոս Լիման: Այս յաղթանակից յետոյ «Արարատ-Արմենիան» վաստակեց 19 միաւոր եւ բարձրացաւ 2-րդ հորիզոնական՝ շրջանցելով «Շիրակին»:

Վանաձորում գուգահեռ ընթացող խաղում տեղի «Լորի ՖԱ»-ն ոչ-ոքի աւարտեց «Փիւնիկի» հետ սկզբունքային հանդիպումը՝ 2:2: Դաշտի տէրերի կազմում երկու կոլն էլ խփեց Ջոնել Դեսիբեան, իսկ հիւրերից աչքի ընկան Արտակ Եղիզարեանն ու Արթուր Միրանեանը:

Այսօր կը կայանայ եւս մէկ հանդիպում: Աղիւսակի 8-րդ տեղում գտնուող «Ուրարտուն» սեփական դաշտում կ'ընդունի «Շիրակին»:

Ախոյեանների Լիգա. «Տոտենհեմի» Ջախջախումը Լոնտոնում, «Ռեալի» Սայթաքումը Մադրիդում

ՈՒԵՖԱ-ի ախոյեանների լիգայի խմբային փուլի 2-րդ տուրի մեկնարկը մի քանի խոշոր անակնկալներ մատուցեց:

Նախ անցած մրցաշարի եզրափակիչի մասնակից Լոնտոնի «Տոտենհեմը» սեփական դաշտում 2:7 հաշուով Չախշախիչ պարտութիւն կրեց Միւնխենի «Բաւարիայից»: Յաղթողների կազմում 4 կոլ խփեց Սերժ Գնաբերին: «Տոտենհեմը» երկրորդ անգամ եւրոպաւաւթներում 7 գնդակ բաց թողեց: 24 տարի առաջ լոնտոնցիները ինտերտոտոյի գաւաթի խաղում 0:8 հաշուով պարտուել էին գերմանական «Քյոլնին»:

Մադրիդի «Ռեալը» «Սանտյագո Բերնաբեու» մարզադաշտում հրաշքով փրկուեց բելգիական «Բրիւզեի» հետ խաղում: Հիւրերն արդէն առաջին խաղակէսում երկու կոլ խփեցին եւ ծանր դրութեան մէջ դրեցին մադրիդցիներին: Տանտէրերի բախտը բերեց երկրորդ կէսում, քանի որ բելգիացիներն ամբողջ թիմով ետ նահանջեցին եւ թոյլ տուեցին հաւասարեցնել հաշիւը՝ 2:2, բացի այդ մրցաւարները պատասխան առաջին կոլը խփելիս չնկատեցին Սերխիո Ռամոսի խաղից դուրս վիճակը:

Անակնկալ մատուցեց նաեւ Դոնեցկի «Շախտյորը», որը Միլանում կամային յաղթանակ տարաւ «Ատալանտայի» նկատմամբ՝ շտրհիւ դարպասապահ Պիատովի ետ մղած 11մ հարուածի եւ 90+5-րդ ընթացքին խփած կոլի՝ 2:1:

«Ռոման» Չյաղթեց Առանց Մխիթարեանի

Իտալիայի առաջնութեան 7-րդ տուրում «Ռոման» տանը խաղաց «Կալիարիի» հետ: Դաշտի տէրերը բաւարարուեցին 1 միաւորով: Գրանցուեց ոչ ոքի՝ 1:1: Վերջին ընթացքին հոռոմէական թիմի խորուաթ յարձակուող Նիկոլա Կալինիչը գրաւեց մրցակցի դարպասը, սակայն VAR-ի օգնութեամբ կոլը չգրանցուեց:

Վնասուածքի պատճառով մայրաքաղաքային թիմի կազմում հայտաւորուած չէր Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը:

«Ռոման» 12 միաւորով 5-րդ տեղում է: «Կալիարին» ունի 11 միաւոր եւ 7-րդն է: 6-րդ տեղ բարձրացաւ «Լացիոն», որը 2:2 հաշուով աւարտեց արտագնայ հանդիպումը «Բոլոնիայի» հետ եւ նոյնպէս ունի 11 միաւոր:

Հասաւ 4:0 հաշուով:

Աչքի ընկան ուրուգուայցի յարձակուող Լուիս Սուարեսը, չիլիացի կիսապաշտպան Արտուրո Վիդալը, ֆրանսացի յարձակուող Ուսման Դեմբելեն, որը 88-րդ ընթացքին երկրորդ դեղին քարտի համար հեռացուեց: Կատալոնական թիմի չորրորդ կոլը խփեց արգենտինացի յարձակուող Լիոնել Մեսին, որը գերազանց իրացրեց տուգանային հարուածը: Մեսին առաջին կոլը խփեց ընթացիկ մրցաշրջանում: